

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Նոր Ընտրություններու Պահանջը՝ Կանխահաս

Հայաստանի նախկին Հանրապետական Կուսակցությունը եւ իրեն յարող շրջանակները այն խաբկանքը ունենին, որ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը, ուր որ է շուտով պիտի տապալի՝ չկարողանալով լուծել երկրի դիմագրաւած բազմաթիւ հարցերը: Այս կապակցութեամբ անոնք կը խօսէին ամիսներու մասին, երբ ժողովուրդ անդրադառնալով «խաբուած» ըլլալուն, փողոց պիտի իջնէր ու պահանջէր կառավարութեան հրաժարականը, ու իրենք ալ վերադառնանային իրենց նախկին պաշտօններուն: Այս ուղղութեամբ տարուող քարոզչութիւնը հիմնուած էր երկու՝ անհիմն փաստարկներու վրայ: Առաջինը՝ նոր իշխանութիւնները կը պատրաստուին յանձնել Արցախը, իսկ երկրորդը՝ ոչինչ չէ փոխուած, եւ ընդհակառակը երկիրը կ'երթայ դէպի կործանում: Այս երկու ուղղութիւններով լայնածաւալ քարոզչութիւնը, որեւէ արդիւնքի չհասնելէ ետք եւ ընդհակառակը ժողովուրդի կողմէ հակակրանքը իրենց նկատմամբ աւելի շեշտուելով, վերջերս հրատարակ նետուեցաւ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու պահանջը, դարձեալ «Արցախը կորուստէ փրկելու» պատճառաբանութեամբ:

Վարչապետական համակարգերու պարագային արտակարգ ընտրութիւններու անհրաժեշտութիւնը կը ծագի երբ կառավարութիւնը կորսնցնէ խորհրդարանէն ներս իր մեծամասնութիւնը եւ կամ երկրէն ներս յառաջանայ ընկերային բեւեռացում, ու ժողովուրդի մեծամասնութիւնը սկսի դժգոհութիւն արտայայտել երկրի ղեկավարին նկատմամբ: Ներկայիս Հայաստանի պարագային գոյութիւն չունին եւ մէկը եւ միւսը: Խորհրդարանէն ներս իշխող ուժը կը վայելէ բացարձակ մեծամասնութիւնը եւ ի վիճակի է հաստատելու իր առաջարկած օրէնսդրական բոլոր որոշումները՝ առանց դժուարութեան:

Միւս կողմէ, անցեալ շաբաթ Միջազգային Հանրապետական Հիմնարկը հրապարակեց իր հերթական ծաւալուն հարցախոյզը, նուիրուած Հայաստանի քաղաքական ու ընկերային հարցերուն: Ներկայացուած տուեալներուն համաձայն, քաղաքացիներու 78 տոկոսը դրական արտայայտուած է վարչապետի գործունէութեան նկատմամբ: Իսկ, այսօրուայ դրութեամբ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Իմ Բայլը» դաշինքին պատրաստ է քուէարկելու ընտրողներու 55 տոկոսը: Նոյն հարցախոյզը ցոյց կու տայ որ ՀՀ-ին ու ՀՀ-ի տրուած վստահութիւնը 3-4 տոկոսի սահմաններուն մէջ է:

Յետեղափոխական Հայաստանը այժմ կը գտնուի կայուն զարգացման ուղիին վրայ, որուն կը

ԱՄՆ Ծերակոյտին Կողմէ Հայկական Ցեղասպանութեան Բանաձեւի Ընդունումէն Ետք Պետական Քարտուղարութիւնը Կը Յայտարարէ՝ «Վարչակազմի Տեսակէտը Կը Մնայ Անփոփոխ»

Դեկտեմբեր 17-ին, ԱՄՆ Պետական Գրասենեակը մեկնաբանելով Ծերակոյտին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, յայտնեց որ վարչակազմի տեսակէտը կը մնայ անփոփոխ:

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան խօսնակ Մորկըն Օրթակուս հրապարակեց պաշտօնական կարճ յայտարարութիւն մը, որուն մէջ ըստած է. «Ամերիկեան վարչակազմի դիրքորոշումն անփոփոխ է: Մեր մօտեցումը արտացոլուած է այս տարուան Ապրիլին ԱՄՆ նախագահի կողմէ հնչած յայտարարութեան մէջ»:

Ապրիլ 24-ին՝ Հայոց ցեղասպանութեան հերթական տարելիցի առթիւ հրապարակուած ուղերձին մէջ նախագահ Տանտլո թրամփ 1915 թուականի իրադարձութիւնները անուանած էր «Մեծ եղեռն»՝ խուսափելով ցեղասպանութիւն բառի օգտագործումէն:

Դեկտեմբեր 12-ին, Միացեալ Նահանգներու Ծերակոյտը միաձայնութեամբ հաստատեց Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող՝ թիւ 150 բանաձեւը: Ծերակուտականներէն ոեւէ մէկը վեթօ չդրաւ այս անգամ փաստաթուղթի քուէարկութեան վրայ: Վերջին ամիսներուն 3 անգամ հանրապետական տարբեր ծերակուտականներ՝ արգելափակած էին Բանաձեւի քուէարկութիւնը, սակայն այս անգամ ոչ մէկը չընդդիմացաւ ու բանաձեւը ընդունուեցաւ միաձայնութեամբ:



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը հայ ժողովուրդի անունով գնահատանքի խօսք ուղղեց Ծերակոյտին ու Ներկայացուցիչներու Տան՝ Հայոց ցեղասպանութեան փաստը ճանաչող բանաձեւերու ընդունման առթիւ:

«Ուզում եմ հայ ժողովրդի անունից գնահատանքի խօսքեր ասել ԱՄՆ Սենատի բոլոր անդամներին, նաեւ ուզում եմ գնահատանքի խօսքեր ասել Ներկայացուցիչներին Պալատի անդամներին. գիտէք, որ Հոկտեմբերի վերջին Ներկայացուցիչներին Պալատը նոյնպէս ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւ: Ուզում եմ գնահատանքի խօսքեր ասել Ամերիկա-Շար.ը էջ 5

ՄԴՀԿ-ի Յայտարարութիւնը ԱՄՆ Ծերակոյտին Կողմէ Հայոց Ցեղասպանութեան Գնահատման Առթիւ

ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը կ'ողջունէ Միացեալ Նահանգներու Ծերակոյտի պատմական որոշումը՝ Հայկական ցեղասպանութեան բանաձեւի միաձայնութեամբ հաստատման առթիւ եւ Հայ ժողովուրդի անունով շնորհակալութիւն կը յայտնէ ծերակուտականներ՝ Ռապըթ Մենենտեզին եւ Դէտ Քրուզին, ինչպէս նաեւ Ծերակոյտի բոլոր անդամներուն, որոնք մերժելով վարչակազմի ճնշումները, կանգնեցան արդարութեան կողքին:

Հայկական ցեղասպանութեան ճանաչումը եւ թրքական ժխտողականութեան մերժումը կարեւոր էր, ոչ միայն Հայութեան համար, այլեւ Միացեալ Նահանգներուն՝ որ կը դաւանի ըլլալ արդարութեան եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան շատագուր ամէնուրեք:

Ծերակոյտը իր այս որոշումով եկաւ միանալու Ներկայացուցիչներու Տան նախապէս առած քայլին, առաւել պարտաւորեցնելով Միացեալ Նահանգներու նախագահին, որ այսուհետեւ պաշտօնական յայտարարութիւններուն մէջ օգտագործէ «Հայկական ցեղասպանութիւն» եզրը:

Գոնկրէսի որոշումներուն լոյսին տակ, վերատեսութեան պէտք է ենթարկուին նաեւ՝ ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման բացակայութեան պատճառաբանութեամբ, Ամերիկեան դատարաններուն կողմէ նախապէս մերժումի արժանացած դատական այն գործերը, որոնք ներկայացուած էին զոհերու իրաւաջաջորդներուն կողմէ:

Անգամ մը եւս կը պահանջենք, որպէսզի թրքական պետութիւնը առերեսուի իր պատմութեան սեւ էջերուն հետ, ընդունի Հայոց ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում կատարէ Հայութեան:

Այս առթիւ կու գանք արձանագրելու որ, Գոնկրէսէն ներս ձեռք ձգուած վերջին յաջողութիւնները կը պարտինք Ամերիկահայութեան հետեւողական ու հաւաքական ջանքերուն:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին Դեկտեմբեր 13, 2019

Հայաստանցիներուն 76 Տոկոսը Դրական Կը Գնահատէ Վարչապետի Գրասենեակի Աշխատանքը

Հայաստանի Հասարակութեան մեծ մասը բաւարար կը նկատէ իշխանութիւններու գործունէութիւնը՝ ըստ Միջազգային Հանրապետական Հիմնարկի հրապարակած նոր հարցախոյզին:

Հարցուածներուն 76 տոկոսը դրական կը գնահատէ վարչապետի գրասենեակի աշխատանքը, իսկ 63 տոկոսը գոհ է Ազգային ժողովի աշխատանքէն: Հայաստանցիներու մեծ մասը նաեւ լաւատես է երկրի ապագայի վերաբերեալ, քիչ տարբերութեամբ շատ են այն քաղաքացիները, որոնք կը համարեն, որ երկրի զարգացումը կ'ընթանայ ճիշդ ուղիով:

Նոյն հարցերը «Ազատութիւնը» տուած է քաղաքացիներուն:

Քաղաքացիներու 30 տոկոսը կառավարութեան ամենամեծ յաջողութիւնը կը համարէ քրուիցիայի նուազումը, 19 տոկոսը՝ մարդոց հոգեբանական վիճակի բարելաւումը, իսկ 13 տոկոսը՝ ժողովրդավարութեան հաստատումը,

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արմեն Սարգսեանի Կճռորոշ Ոչը. Պէտք Չէ Խանգարել

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեանը մասնակցել է Քաթարի մայրաքաղաքում անցկացրած Դոհա ֆորումին, որն արդէն մօտ երկու տասնամեակ անցկացում է Դոհայում եւ միաւորում միջազգային տարբեր ասպարէզներում հեղինակութիւն ունեցող անձանց, համաշխարհային ապագայի շուրջ հարցերի քննարկման համար:

Արմեն Սարգսեանը ելոյթ է ունեցել եւ խօսել լայն զարգացումների, նոր աշխարհի իրողութիւնների, հին պարագիծերի ժամկետանց դառնալու, «փոքրիկ ուժի» մեխանիզմի մասին:

Այդ ընթացքում, Հայաստանում նախկինում իշխող ուժի ներկայացուցիչ Արփինէ Յովհաննիսեանը Արմեն Սարգսեանին է դիմել ՄԻ դատաւորներին վաղ կենսաթոշակի մասին աղմուկ հանած օրինագծի հարցով: Արփինէ Յովհաննիսեանը նախագահ Սարգսեանին յորդորում է «բազմաթիւ ուղեւորութիւնների միջակայքում» ուշադրութիւն դարձնել հարցին եւ թէկուզ գոհել «ոչ քաղաքական ռեյտինգի» մի քանի տոկոսը՝ Աժ ընդունած օրէնքի սահմանադրականութիւնը վիճարկելու համար:

Նախագահ Սարգսեանն ունի իր խնդիրները, ՀՀ-ն կամ նախկին իշխող համակարգը՝ իր խնդիրները: Ընդամենը մօտ երկու տարի առաջ՝ 2018-ի Յունուար-Մարտին նախկին իշխող համակարգը Արմեն Սարգսեանին դիտարկում էր իր խնդիրների ծիրի յարմար մեխանիզմ, քուէարկելով նրա նախագահութեան օգտին: Արմեն Սարգսեան թեկնածուն, որն ունէր միջազգային մեծ հեղինակութիւն, դիտում էր ՀՀ-ն համար կարեւորագոյն խնդրի լուծման նշանակալի գործօն, կամ աւելի շուտ երկու կարեւորագոյն խնդրի լուծման՝ արտաքին յարաբերութիւններ ու լեզիտիմութիւն, եւ ներքին հաւասարակշռութիւն: Արմեն Սարգսեանը պէտք է հաւասարակշռէր Կարէն Կարապետեանին:

Սակայն, քուէարկութիւնից մօտ երկու ամիս անց պատկերը արմատապէս փոխուեց: Չի փոխուել իհարկէ Արմեն Սարգսեանի դերը, գործառնութիւնը, նաեւ սահմանադրական ու քաղաքական փունկիցիոնալութեան շրջանակը:

Պարզապէս այդ ամէնն այլեւս չի ծառայում նախկին իշխանութեանը: Նախկին իշխանութիւնը փորձում է ներկայացնել, որ Սարգսեանը ծառայում է նոր իշխանութեանը:

Առերեւոյթ թուում է այդպէս, գործնականում սակայն, դա ոչ միայն այդքան էլ այդպէս չէ, այլ խոշոր հաշուով չի էլ կարող այդպէս լինել, մի պարզ պատճառով՝ չկայ նոր իշխանութիւն: Փորձալիմաստով նոր իշխանութիւնը ձեւաւորուած է, սակայն իբրեւ քաղաքական մարմին այն բիւրեղացուած չէ: Ըստ այդմ հնարաւոր չէ ծառայել մի բանի, ինչը գոյութիւն չունի, չկայ:

Այդ իմաստով, Արմեն Սարգսեանը ծառայում է հաւասարակշռմանը, սակայն ոչ թէ ներիշխանական, կամ հասարակական-քաղաքական իրավիճակին, այլ հանրային գիտակցութեան եւ հոգեբանութեան: Ստացում է, թէ ոչ, այլ հարց է, սակայն նախագահ Սարգսեանի գործօնը ներկայում կարող է արժեւորուել եւ ֆունկցիոնալ շօշափելի ՕԳԳ ձեռք բերել այդ իմաստով, հաշուի առնելով յետյեղափոխական իրողութիւններն ու ծայրայեղացուած բախումները:

Այդ իմաստով, պէտք է վիճարկել ՄԻ դատաւորների վաղ կենսաթոշակի մասին օրէնքի նախագծի սահմանադրականութիւնը: Թերեւս՝ ոչ, որովհետեւ դա կը նշանակի խախտել ՄԻ դատաւորների բանականութեան ու բարոյականութեան կանխավարկածը:

Եթէ նրանցից որեւէ մէկը որոշէ է, որ պէտք է օգտուի այդ օրէնքի հնարաւորութիւնից, ապա պէտք է խանգարել:

Միաժամանակ պէտք է վիճարկել ու այդպիսով խանգարել ՄԻ դատաւորներին օրէնքը անհատական մակարդակում մերժելու մտադրութեան հարցում: Իսկ առանցքայինը թերեւս դա է, որովհետեւ վիճահարոյց օրէնքն ունի ոչ թէ իրաւական կամ քաղաքական, այլ բարոյական եւ արժեք-համակարգային «էքզիստենցիալ» նշանակութիւն, գուցէ նոյնիսկ հեղինակների կամ քից անկախ:

Չարժէ միջամտել ՄԻ դատաւորների՝ դատաւոր մնալու կամ լինելու այդ հնարաւորութեանը: «ԼՐԱԳԻՐ»

Խառնակչութիւններ՝ Բանտից եւ Աքսորից

Կալանքի տակ գտնուող Ռոբերտ Քոչարեանը «մամուլի նկատմամբ աննախադէպ բռնաճշումների» եւ «դատաիրաւական բեւաբեղելի» պայմաններում հարցազրոյց է տուել լրատուամիջոցներից մէկին ու ի թիւս այլ հարցերի անդրադարձել նաեւ դարաբաղեան խնդրին ու Արցախում տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններին: Բայց մինչ այդ խօսել է նաեւ իր նկատմամբ առաջադրուած մեղադրանքի մասին ու կոշտ գնահատականներ տուել դատական համակարգին՝ յայտարարելով, թէ «դատական իշխանութիւնը գտնուում է գործադիր իշխանութեան բիրտ ճնշման տակ», «կոռուպցիայով կեղտոտուած դատաւորներն ու դատախազները աւելի հնազանդ են ռեժիմին», եւ այլն:

Համաձայնուէք՝ իսկոյն երեւում է, որ մարդը տիրապետում է ոլորտին: Նրա եւ Սերժ Սարգսեանի օրօք դատական համակարգը հենց այդ սխեմայով էլ գործում էր. դատաւորներն ու դատախազներն ինչքան կոռումպցուած լինէին՝ այնքան աւելի հնազանդօրէն կը ծառայէին ռեժիմին, դրա համար էլ կոռումպցուածութիւնը ոչ միայն խրախուսուում էր, այլեւ համարուում էր «մրցակցային առաւելութիւն»:

Ինչ վերաբերում է «գործադիր իշխանութեան բիրտ ճնշմանը», ապա Քոչարեանի համար, պարզուում է, դա անընդունելի է: Չէ՞ որ 1998-ին էլ ժողովրդի մի մասը պահանջում էր նախկին իշխանութիւններին «նստացնել», բայց ինքը համարեց, որ չարժէ նման բան անել: Հասկացա՞ք: Այսինքն՝ ինքն էր որոշում, թէ ում նկատմամբ պէտք է քրէական գործեր յարուցել եւ «նստացնել»: Եւ այդ մարդը հիմա խօսում է դատաւորների նկատմամբ գործադիր իշխանութիւնների ճնշումների մասին:

Հիմա անդրադառնանք դարաբաղեան խնդրին: Ըստ Ռոբերտ Քոչարեանի, ՀՀ իշխանութիւնների մասնակցութեամբ «Ղարաբաղի վզին ինչ-որ սցենար է փաթեթուում», պարզ ասած՝ ՀՀ իշխանութիւնները դաւեր են նիւթում Արցախի դէմ: Փորձէք հասկանալ:

Հայաստանի ցանկացած իշխանութիւն, որը կը փորձի անընդունելի գիջումներ անել Արցախի հարցում, հզօր դիմադրութեան կը հանդիպի եւ շատ արագ կը կորցնի իշխանութիւնը, ու սա, վստահաբար, գիտակցում են բոլորը: Հետեւեալը՝ Հայաստանի ցանկացած իշխանութիւն փորձելու է կարգաւորման գործընթացում հասնել առաւելագոյն արդիւնքի: Իսկ առաւելագոյն արդիւնքի հասնել հնարաւոր է միայն Հայաստանի եւ Արցախի բացարձակ ու անառարկելի միասնութեամբ: Որեւէ մէկը, վստահաբար, չի կարող հերքել սա: Իսկ ի՞նչ է ասում Ռոբերտ Քոչարեանը: Ասում է, որ Ղարաբաղի իշխանութիւնները չպէտք է տուրք տան որեւէ մէկի, այդ թուում՝ ՀՀ ղեկավարի «քմահաճոյքներին», Արցախն էլ չպէտք է

վախենայ ՀՀ իշխանութեան հետ տարաձայնութիւններից: Եւ սա՛յն դէպքում, երբ Հայաստանի ու Արցախի ճակատագրով մտահոգ ցանկացած մարդ ամենաշատը հենց դրանից պիտի վախենայ, որովհետեւ այդ տարաձայնութիւններից աւելի կործանարար բան պարզապէս հնարաւոր չէ պատկերացնել:

Ի՞նչ է ստացւում: Ստացւում է, որ Քոչարեանը գրեթէ բաց տեքստով ԼՂՀ իշխանութիւններին կոչ է անում հակադրուել Հայաստանի իշխանութիւններին, Արցախի ժողովրդին էլ կոչ է անում ընտրել այնպիսի նախագահ, որը Հայաստանի այսօրուայ լեզիտիմ իշխանութիւնների հետ առճակատման գնալուց չի խուսափի: Պարզ ասած՝ կոչ է անում գնալ Հայաստանի ու Արցախի համար ամենակործանարար ճանապարհով: Եւ դա՛ ընդամենը այն պատճառով, որ յոյս ունի դրանով թուլացնել Հայաստանի իշխանութիւններին, հասնել արտահերթ ընտրութիւնների եւ հնարաւոր է՝ յայտնուել ազատութեան մէջ «իրավիճակի փոփոխութեան պատճառով»:

Հետաքրքիր է՝ Արցախի ժողովուրդը կը ցանկանա՞յ ունենալ Հայաստանի իշխանութիւնների հետ առճակատման գնացող իշխանութիւններ՝ ինչ է, թէ դրա արդիւնքում Քոչարեանը կը կարողանայ խուսափել պատասխանատուութիւնից, յայտնուել ազատութեան մէջ ու շարունակել առիւծներ որսալ ափրիկեան սաւաննաներում: «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁՆԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՍՏՐՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՂԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Նոր Ընտրութիւններու Պահանջը՝ Կանխահաս

Շարունակուած էջ 1-էն

գիտակցի մաւել ժողովուրդի մեծամասնութիւնը՝ ի հեճուկս մախկին իշխանութիւններու բարձրացուցած աղմուկին ու հակաքարոզչական արշաւին:

Միջազգային կառոյցներուն մօտ եւս կայ վստահութիւն կառավարութեան վարած տնտեսական ու ընկերային քաղաքականութեան նկատմամբ: Իսկ, Արցախի հարցի շահագործումը սկսած է այլեւս դառ-

նալ ծիծաղելի ու նպաստել միմիայն թշնամի կողմի նպատակներուն:

Ներկայիս խորհրդարանական ընտրութիւնները կանխահաս եւ առաջին հերթին մեկնելով երկրի ընդհանուր շահերէն ու մաւել ձեռնտու չեն մախկին իշխանութիւններուն համար, որոնք կարիք ունին տակաւին երկար ժամանակի, մեղմելու համար ժողովուրդի մօտ իրենց նկատմամբ գոյութիւն ունեցող անվստահութիւնն ու հակակրակները:


«ՄԱՍԻՍ»

Ջօրացիւք
Օժանդակէք
Փրկէք
SYRIAN ARMENIAN RELIEF FUND
www.syrianarmenianreliefund.org
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendate, CA 91209-1948

Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շարաքաթերթին

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարչապետի Պնդմամբ՝ Ամբողջ Պետական Զամակարգը Կը Դիմադրէ Յեղափոխութեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան նիստի ընթացքին

Ամբողջ պետական համակարգը կը դիմադրէ յեղափոխութեան, կառավարութեան նիստի ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը: «Եւ հը դիմադրութիւնը ես ջարդելու եմ, չկայ ուրիշ տարբերակ», - աւելցցած է ան:

Նշելով, որ Հայաստանի տնտեսական կարողականութեան, տնտեսական աճի, տնտեսութեան ընթացիկ իրավիճակի մասին հնարաւոր չէ բնական տեղեկատուութիւն ստանալ, կառավարութեան ղեկավարը շարունակած էր - «Հնարաւոր չի, ես, օրինակ, չեմ կարող ինձ անհրաժեշտ տեղեկատուութիւնը ստանալ: Հնարաւոր է ստանալ զնահատական մեր պետական մարմիններէ, որը շատ թէ քիչ իրար մօտիկ կը լինի, մեր տնտեսական վիճակի մասին, մեր տնտեսութեան կարողականութեան մասին, մեր տնտեսական աճի վերաբերեալ՝ սկսած պիտոճէի քննարկումներէ եւ թէ մենք ինչ կարող ենք անել: Եւ հետեւաբար ինչի՞ ենք էսպէս աշխատում՝ որովհետեւ միակ ձեւը, որ հնարաւոր է աշխատել՝ քաղաքական շեշտադրումներ դնելով եւ պետական համակարգին բողոքով, որ «գնացէք էս խնդիրը լուծէք», կամ՝ «էս ա խնդիրը՝ լուծուե՞ց էս խնդիրը՝ լուծուեց, չլուծուեց՝ չլուծուեց»:

Փաշինեանի պնդմամբ՝ այս տարուան տնտեսական բոլոր ցուցանիշները «եւ ընդհանրապէս ամէն ինչը» կը կատարուի ի հեճուկա պետական կառավարման համակարգի: «Ես ուղիղ ասում եմ, որպէս Հայաստանի Հանրապետու-

թեան վարչապետ՝ ինչ յաջողութիւն եւ ձեռքբերում մենք էսօր ունենք, մի քիչ, ամբողջը, 100 տոկոս՝ ի հեճուկա պետական կառավարման համակարգի, ի հեճուկա»:

«Կը ներէք, չնեղանաք, բայց Հայաստանում քորուփցիայի դէմ պայքարը էլի տեղի ա ունենում ի հեճուկա պետական կառավարման համակարգի: Որովհետեւ ամբողջ իրաւապահ համակարգին պէտք ա ժամանակ առ ժամանակ անց ասես՝ բա ի՞նչ եղաւ, բա ի՞նչ եղաւ: Ու պատճառ միշտ էլ կը գտնուի, միշտ պատճառ կայ, էն օրը ասեցի՝ իսկ ինչո՞ւ նրանք սպանեցին արքայան չեմ լեթիմ որ ուրիշ պատճառ չլինի, էս պատճառ միշտ էլ կայ», - շեշտած է վարչապետը՝ շարունակելով - «Փորձաքննութիւնը, էն մէկը ցուցմունք չի տալիս, էն մէկը փախաւ, էն մէկը չփախաւ, էն մէկը ուզում ա փախնի»:

«Ի հեճուկա, եւ սա ճշմարտութիւն է: Եւ եկէք արձանագրենք, որ ամբողջ պետական համակարգը, այո, յեղափոխութեանը դիմադրում ա, դիմադրում ա ամբողջ պետական համակարգը, եւ հը դիմադրութիւնը ես ջարդելու եմ, չկայ ուրիշ տարբերակ: Որովհետեւ Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդն ինձ՝ անձամբ ինձ, ձայն ա տուել եւ մեր քաղաքական ուժին ձայն ա տուել, որ էս երկրում փոփոխութիւն տեղի ունենայ, ոչ թէ տարբեր առիթներով անընդհատ պտտուենք, պտտուենք, պտտուենք», - յայտարարած է Նիկոլ Փաշինեանը:

Սահմանադրական Դատարանի Դատաւորներու Վաղ Կենսաթոշակներու Օրինագիծն Ընդունուած Է

Ազգային ժողովը երկրորդ ընթացքում եւ ամբողջութեամբ ընդունած է Սահմանադրական դատարանի դատաւորներու վաղ կենսաթոշակային համակարգի ներդրման օրինագիծը:

Եթէ օրէնքն ուժի մէջ մտնելէ ետք երկամսեայ ժամկէտի ընթացքին 7 դատաւորները, որոնց շարքին՝ ՄԴ նախագահ Հրայր Թովմասեանը, հրաժարական տան, ապա մինչեւ իրենց պաշտօնավարման ժամկէտի լրանալը կը ստանան իրենց աշխատավարձի չափով կենսաթոշակ:

Օրէնքին դէմ քուէարկած «Բարգաւաճ Հայաստան» (ԲՀԿ) խմբակցութեան պատգամաւոր Գէորգ Պետրոսեանը յորդորած է

դատաւորները՝ չհամաձայնիլ իշխանութիւններու առաջարկին, որուն պատճառով, ըստ անոր, ամէն գնով Սահմանադրական դատարանի դատաւորներէն ազատիլն է:

Իշխող «Իմ քայլը» խմբակցութեան Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեանը, որեւէ անպարկէշտ բան իրենց առաջարկին մէջ չի տեսներ, ընդհակառակը՝ կը կարծէ, որ իրենք այս օրէնքով պարզապէս ձեռք կը մեկնեն Սահմանադրական դատարանի դատաւորներուն:

Ի՞նչ կ'ըլլայ, եթէ այդ մեկնած ձեռքը որեւէ դատաւոր չսեղմէ եւ վաղաժամ թոշակի չբերթայ, «Ազատութիւն»-ը հարցուցած է Ալեն

Սերժ Սարգսեանի Պաշտպանական Խուճրք Պիտի Բողոքարկէ Դատախազութեան Որոշումը

Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանի պաշտպանական խուճրքը կը պատրաստուի բողոքարկել դատախազութեան որոշումը, որով մերժուած էր Սերժ Սարգսեանի նկատմամբ քրէական հետապնդումը դադարեցնելու իրենց պահանջը: Այդ մասին «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ յայտնած է Սերժ Սարգսեանի պաշտպան Արամ Մակինեանը՝ նշելով, որ դատախազութեան որոշումն անհիմն կը համարեն:

Սերժ Սարգսեանի պաշտպանը բողոք ներկայացցած էր՝ պահանջելով վերացնել անոր որպէս մեղադրեալ ներգրաւելու մասին որոշումը, բողոքարկման հիմք ընդունելով Հայաստանի պաշտօնաթող նախագահի գործառնջթային անձեռնմխելիութեան հանգամանքը՝ պնդելով՝ երրորդ նախագահին վերագրուած է այնպիսի արարք, որ բխած է անոր կարգավիճակէն եւ գործունէութենէն:

Դեկտեմբեր 11-ին դատախազը մերժած էր այս բողոքը՝ նշելով, որ Սարգսեանին մեղադրուած են այնպիսի գործողութիւններ, որոնք չեն բխիր Հայաստանի Սահմանադրութեամբ եւ օրէնքներով Սարգսեանին վերապահուած լիազօրութիւններէն, որոնք աղերս չունին անոր կարգավիճակի հետ, ուստի պաշտօնաթող նախագահն այս պարագային անձեռնմխելիութեան սահմանադրական երաշխիքէն չի կրնար օգտուիլ: Դատախա-

զի այս որոշումը Սերժ Սարգսեանի պաշտպանական խուճրքը նաեւ դատարանէն ներս պիտի բողոքարկէ: Ինչ կը վերաբերի մօտ կէս միլիառ դրամի յափշտակութիւն կազմակերպելու համար մեղադրուող նախկին նախագահ Սերժ Սարգսեանի ու գիւղատնտեսութեան նախկին նախարար Սերգոյ Կարապետեանի առերեսման մասին տեղեկութեան, Արամ Մակինեանը չէ մեկնաբանած:

«Ես լուրերը չեմ մեկնաբանում, կարող եմ նորից կրկնել այն, ինչ ասել եմ առաջին անգամ Դեկտեմբերի 4-ին: Ես պարոն Սարգսեանի մասնակցութեամբ կատարուած քննչական գործողութեան միւս մասնակցի՝ այսինքն՝ առերեսուողի անուն-ազգանունան մասին այս պահին էլ որեւէ տեղեկատուութիւն չեմ կարող յայտնել: Այս պահին դեռեւս մամուլի համար նոր բան չունենք ասելու: Երբ որ կը լինի նոր տեղեկատուութիւն, անպայման տեղեկատուութիւնը կը տանք մամուլին», - ըսած է ան:

Յիշեցնենք, որ Դեկտեմբեր 4-ին Յատուկ քննչական ծառայութիւնը յայտարարած էր, որ Սերժ Սարգսեանին մեղադրանք առաջադրուած է այն բանի համար, որ ան կազմակերպած է առանձնապէս խոշոր չափի՝ մօտ կէս միլիառ դրամի յափշտակութիւնը: Անոր նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է չհեռանալու մասին ստորագրութիւնը:

Նախարար Բաղասեանը Կը Պնդէ Դատական Իշխանութեան Սեչ Զամակարգուած Քորուփցիա Չկայ

Դատական իշխանութեան մէջ այժմ համակարգուած քորուփցիա չկայ: Այս մասին յայտարարած է արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեանը լրագրողներու հետ ձեպագրոյցի ժամանակ՝ ընդգծելով, որ մինչեւ յեղափոխութիւնը քորուփցիոն յստակ մեխանիզմներ եղած են, կաշառքի յստակ դրոյքաչափեր գործած են:

«Վերից վար քորումփացուած յստակ մեխանիզմներով գործող դատական համակարգը, որը գոյութիւն է ունեցել մինչեւ 18 թուականի Մայիս-Յունիս ամիսները, որտեղ ուղղակի հաստատուած դրոյքաչափերով կաշառքները վերից վար, վարից վեր իջել են: Օրինակ՝ նախկին Մարդու իրաւունքների պաշտպանի յայտարարութիւնը դրա մասին», - ըսած է նախարարը: Հարցին, թէ հիմա նմանատիպ դատական համակարգ չկա՞յ, նախարարը պատասխանած է. - «Ոչ, բնականաբար, համակարգուած քորուփցիա չկայ դատական համակարգում»:

Վերաքննիչ քրէական դատարանի նախագահ Վազգէն Ռշտունին յայտարարած էր, թէ դատական համակարգի վրայ ճնշումներ կան թէ՛ գործադիր, թէ՛ օրէնսդիր մարմնի կողմէ: Անոր արձագանգելով՝ արդարադատութեան նախարարն աւելի վաղ ըսած էր՝ եթէ Ռշտունին նկատի ունի ներդրուող բարի վարուց մեխանիզմները,

որոնք միջազգային բոլոր չափանիշներուն կը համապատասխանեն, ապա հանրութիւնն իրաւունք ունի գիտնալու՝ արդե՞օք քրէական գործքննող դատաւորը քրէական հեղինակութեան հետ հանդիպումներ կ'ունենայ, յետոյ դատական նիստերու դահլիճին մէջ արդարադատութիւն կ'իրականացնէ: Կամ արդե՞օք դատաւորը քորումփացուած պաշտօնեայի հետ շփումներ ունի: Բաղասեանը վերահաստատած է իր այս խօսքը՝ պնդելով դատական օրէնսգիրքի մէջ ներառած են եւ պիտի շարունակեն ներառել դատաւորներու ստուգման որոշակի մեխանիզմներ, պիտի կատարելագործեն նաեւ կարգապահական պատասխանատուութեան հիմնարկը:

«Ունենալ համակարգ, որը բացառապէս կախուածութեան մէջ է եղել գործադիրից եւ այդ պայմաններում եւս լուել, եւ իշխանափոխութիւնից յետոյ, երբ որ մենք ձեռնարկում ենք դատաիրաւական բարեփոխումներ, երբ որ մենք ասում ենք՝ եկէք, անկախութիւնն ապահովենք դատական համակարգի, մենք երբ ասում ենք՝ քաղհասարակութիւն, եկէք, ներգրաւուէք, մեզ հետ արէք դա, եւ էս պայմաններում որոշ յայտարարութիւններ մեկնաբանել որպէս դատարանի նկատմամբ ճնշում զաւեշտից բացի, որեւէ այլ տպաւորութիւն ինձ մօտ չի թողնում», - յայտարարած է ան:

Սիմոնեանին: «Ինչ է լինու՞մ՝ որեւիցէ բան չի լինում, որեւիցէ աղէտալի բան չի լինում, գնում ենք առաջ, մեկնում ենք միւս

ձեռքը: Մի հատ հասկանանք՝ էստեղ ինչ է լինում, տեսնենք ինչ է լինում, ինչ շարունակութիւն է լինում, նոր կը գնանք առաջ»:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը եւ Ատրպեյճանը ԼՂ Հարցի Կարգաւորման Գործընթացին Մէջ «Որեւէ Փաստաթուղթ Չեն Քննարկեր»

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղդալեանը մամուլի ասուլիսի ժամանակ չէ հաստատած Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը այն մասին, թէ Հայաստանի ու Ատրպեյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւններու դեկավարներու յաջորդ հանդիպումը պիտի կայանայ Յունուարին:



Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղդալեան

«Կայ յստակ ձեւաչափ, որ հանդիպման մասին յայտարարում են համաձայնեցուած կարգով միաժամանակ, երբ որ բոլոր մանրամասներն արդէն իսկ համաձայնեցուած են լինում համանախագահների միջոցով: Նշեմ, որ ներկայումս այս համանախագահների յայտարարութեան մէջ նշուած աշխատանքների վերաբերեալ մանրամասները գտնուում են դեռեւս քննարկման փուլում եւ այս առումով որեւէ բան չեմ կարող ասել», - ըսած է ԱԳՆ խօսնակը:

նակը Լաւրովի ծրագրի մասին «Ազատութեան» հարցին պատասխանելով ըսած է. «Դա մենք նշել ենք բազմիցս, դա յստակ է՝ որեւէ փաստաթուղթ չի քննարկուած: Ինչ վերաբերում է, թէ ինչ է նշել պարոն Մամետեարովը, ես չէի ցանկանայ համարել, որ այստեղ կար պարզապէս թեխնիքական վրիպակ իրենց կողմից, որովհետեւ անհասկանալի է, թէ ինչի մասին է խօսում պարոն Մամետեարովը»:

Աննա Նաղդալեանը քանի մը անգամ հերքած է Մամետեարովի յայտարարութիւնները, աւելցնելով, թէ անոնք այս շրջանին պայմանաւորուած են ատրպեյճանական ներքաղաքական վերադասարկումներով:

Մամետեարովը CBC հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին մէջ յիշատակած է, իր խօսքով, Մատրիտեան սկզբունքներու վրայ հիմնուած, այսպէս կոչուած, Լաւրովի ծրագիրը, որ, ըստ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարի, մշակուած է մօտ երկու տարի առաջ Մոսկովայի մէջ կայացած եռակողմ հանդիպման ժամանակ:

Մամետեարովն ատրպեյճանական CBC հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին մէջ յիշատակած է, իր խօսքով, Մատրիտեան սկզբունքներու վրայ հիմնուած, այսպէս կոչուած, Լաւրովի ծրագիրը, որ, ըստ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարի, մշակուած է մօտ երկու տարի առաջ Մոսկովայի մէջ կայացած եռակողմ հանդիպման ժամանակ:

«Եթէ նոյնիսկ պատերազմ լինի, այն չաւերժ չի տեւելու եւ պէտք է լինելու շարունակել բանակցութիւնները», - ըսած է Մամետեարովը:

Յիշեցնենք՝ մամուլին մէջ Լաւրովի ծրագրի մասին սկսած են խօսիլ ոչ թէ երկու, այլ առնուազն 3,5 տարի առաջ՝ 2016-ի գարնան:

Հայրապետեանը Հաստատած է Որ, ՀՖՖ-ի Համար Շինարարութիւն Իրականացուած Ընկերութիւնը Պատկանած է Իրեն

Հայաստանի ֆութպոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) համար շինարարութիւն իրականացուած «Ձեյթոն կահոյքի ֆապրիքա» ընկերութիւնը պատկանած է ֆեդերացիայի նախկին նախագահ Ռուբէն Հայրապետեանին: Այս մասին Հայրապետեանը յայտարարած է արդէն երկրորդ ծաւալուն հարցազրոյցի ժամանակ, որ յաջորդած էր ֆեդերացիային առնչուող քրէական գործի յարուցման:



Ֆութպոլի ֆեդերացիայի նախկին նախագահ Ռուբէն Հայրապետեան

«Այո, կահոյքի ֆապրիքայի սեփականատէրը ես եմ: Այո, ֆեդերացիա, ես նախագահն եմ եղել էն ժամանակ, այո, շինարարական կազմակերպութիւնն իմնա եղել, սեփականատէրն եմ», - ըսած է Ռուբէն Հայրապետեանը «Երկիր Մտտի»-ին տուած հարցազրոյցին մէջ:

Քանի մը քաղաքներու մէջ ֆութպոլի մարզադաշտերու ու մարզադպրոցներու կառուցման եւ նորոգման աշխատանքներ, ապա, չկատարելով կամ մասնակի կատարելով պայմանագրերով նախատեսուած աշխատանքները, կազմած է իրականութեան չհամապատասխանող կատարողական աքթեր, իւրացուցած է խոշոր գումարներ:

Ֆութպոլի ֆեդերացիայի նախկին նախագահի առանձնատան մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած խուզարկութենէն ետք լրատուամիջոցներէն մէկուն մէջ տեղեկութեան արտահոսք եղած է, որ ըստ Ոստիկանութեան բացառապէս Հայրապետեանը 2012-էն 2018 թուականներուն իր ենթականերու միջոցով կազմակերպած է երկրի

Պետական Եկամուտներու Կոմիտէն Հայաստանի Պիւտճէ Վերադարձուցած է Շուրջ 100 Միլիոն Տոլար

ՀՀ պետական եկամուտներու կոմիտէն 2019-ի Յունուար-Նոյեմբեր ամիսներու ընթացքին պետական պիւտճէ վերականգնած է շուրջ 46.8 միլիարդ դրամ՝ հարկի գումար:

Այս մասին ՉԼՄ ներկայացուցիչներու հետ հանդիպման ժամանակ ըսած է ՊԵԿ նախագահի տեղակալ Էտուարտ Յովհաննիսեանը:

դրամի մէջ մեծ մասը բաժին ինկած է բուժազանձման աշխատանքներու շնորհիւ վերականգնուած գումարին: Չվճարած հարկային պարտաւորութիւններու գանձման վերաբերեալ այս տարուան 11 ամիսներուն իրաւաբանական վարչութեան կողմէ կայացուած է 26,108 որոշում՝ 55.5 միլիարդ դրամ գումարի մասով, որպէս արդիւնք պետական պիւտճէ վերականգնուած է 37 միլիարդ դրամ գումար: 2018-ին կայացուած է 5382 որոշում՝ 17.2 միլիարդ դրամ գումարի մասով, վերականգնուած է 13.2 միլիարդ դրամը:

«Ընդհանուր առմամբ իրական գործառնոյթ իրականացնող ստորաբաժանումների կողմից 2019թ. Յունուար-Նոյեմբեր ամիսների ընթացքում պետական պիւտճէ է վերականգնուել շուրջ 46.8 միլիարդ դրամ (մօտ 100 միլիոն տոլար), նախորդ տարուայ 24.5 միլիարդ դրամ գումարի դիմաց», - ըսած է Յովհաննիսեանը:

«Աշխատանքների ծաւալի ընդլայնում է եղել, որի արդիւնքում բուժազանձուած գումարի չափը մեծացել է», - մեկնաբանած է Յովհաննիսեանը:

ՀՆԱ-ն Հայաստանի մէջ Աւելցած է 7,9 Տոկոսով. Համաշխարհային Դրամատուն

2019 թուականի երրորդ եռամսեակին Հայաստանի Համախառն ներքին արդիւնքը (ՀՆԱ) աւելցած է էական՝ 7,9 տոկոսով, անցած տարուան նոյն ժամանակամիջոցի համեմատ: Այս մասին ըսուած է Համաշխարհային դրամատան ղեկավարներէն հաշուետուութեան մէջ:



«ՀՆԱ աճը մնում է ուժեղ», - ըսուած է Հայաստանի վերաբերեալ յաշուետուութեան մէջ:

վերականգնուելի 2018-ին արտադրութեան խափանումներէն ետք:

Համաշխարհային դրամատան փորձագէտները կը կարծեն, որ այդ աճը զգալի չափով պայմանաւորուած է մասնաւոր սպառմամբ: Ինչ կը վերաբերի արտադրութեան, աճի մեծ մասը բաժին ինկած է առեւտուրին եւ սպասարկումներուն, իսկ մնացած մասը՝ արդիւնաբերութեան, հիմնական արտադրութեան, օգտակար հանածոներու արդիւնահանման եւ շինարարութեան:

Նշուած է, որ գնաճը Նոյեմբերին պիտի շարունակէ աճիլ, իսկ սպառողական գիները աւելցած են 1 տոկոսով Նոյեմբերին: Գնաճի միջին տարեկան մակարդակը անցած տարուան Նոյեմբերէն մինչեւ 2019-ի Նոյեմբեր մնացած է 1,5 տոկոսի մակարդակով:

Արդիւնաբերական արտադրութիւնը աւելցած է 9 տոկոսով, այն պարագային, երբ արտադրութիւնը լեռնահանքային ճիւղին մէջ վերականգնուած է 18 տոկոսով, քանի որ հատուածը կը շարունակէ

Միեւնոյն ժամանակ, փոխադրութեան միջոցներու ներմուծման խիստ աճը եւ ոսկիի արտահանման կրճատումը աւելցուցած են առեւտրային պակասորդը:

Երեւանի Նախկին քաղաքապետներէն Մին 75 Հազար Տոլարի Կաշառք Ստացած է

ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը, որպէս առաջնահերթութիւն դիտարկելով կաշառակերութեան տարաբնոյթ դրսեւորումներու դէմ ուղղուած անցիլով պայքարը, օրէնքով իրեն վերապահուած գործառնոյթներու շրջածիրէն ներս ձեռնարկուած հետախուզական միջոցառումներու եւ քննչական գործողութիւններու շնորհիւ բացառապէս է առանձնապէս խոշոր չափի կաշառք ստանալու դէպք:

մաս, այդ շարքին նաեւ քաղաքապետարանի պաշտօնատար անձանց միջոցով, ստացած է առանձնապէս խոշոր՝ 75000 ԱՄՆ տոլարի չափի կաշառք, իսկ խնդիրներուն վերջնական լուծում տալու նպատակով պահանջած է նաեւ կառուցուող շէնքի մէջ Երեւանի քաղաքապետարանի կարիքներու համար յատկացնել 200 մԱ մակերեսով բնակարան:

Մասնաւորապէս, փաստական տուեալներ ստացած են, որ 2009 թ. Երեւան համայնքը ղեկավարող պաշտօնատար անձը քաղաքին մէջ բազմաբնակարան շէնք կառուցապատող կազմակերպութեան հիմնադիրն է՝ անոր օգտին գործողութիւններ կատարելու, կասեցուած շինարարութեան վերսկսման հետ կապուած խոչընդոտները վերացնելու, հարկայնութիւնն աւելցնելու համար, իր եղբօր միջնորդութեամբ 2009 թ. ընթացքին մաս-

ՀՀ քրէական օրէնսգիրքի համապատասխան յօդուածով առերեւոյթ յանցագործութեան դէպքի առթիւ ՀՀ ԱԱԾ քննչական բաժանմունքէն ներս յարուցուած է քրէական գործ, կը կատարուի նախաքննութիւն:

Պաշտօնական աղբիւրը ոչ հաղորդագրութեան մէջ, ոչ ալ «Ազատութեան» հարցմանն ի պատասխան չէ յստակեցուցած, թէ որ քաղաքապետի մասին է խօսքը. մինչեւ 2009-ի մարտը Երեւանը ղեկավարած է Երուսանդ Զախարեանը, ապա՝ Գագիկ Բեգլարեանը:

Սահակ Եպիսկոպոս Մաշալեանը Ընտրուած է Պոլսոյ Զայոց 85-րդ Պատրիարքը

12 Տարուան սպասումէ ետք Պոլսոյ նուիրապետական աթոռը նոր գահակալ ունի: Սահակ Եպիսկոպոս Մաշալեանը, ստանալով Ազգային պատգամաւորական ժողովէն 103 քուէ, ընտրուած է Պոլսոյ Զայոց 85-րդ պատրիարք:

Պատրիարքական իր առաջին խօսքին մէջ Սահակ սրբազանը ուրախութեամբ նշեց, որ Թուրքիոյ հայութիւնը վերջապէս հայր ունեցաւ: Ան երախտագիտութիւն յայտնեց այս ճանապարհին աւանդ ունեցած բոլոր անձանց, շնորհակալութիւն յղեց Ամենայն Զայոց կաթողիկոսին եւ Թրքական իշխանութիւններուն՝ նախագահ Ռեճէպ Թայյպ էրտողանին, ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուին եւ Պոլսոյ նահանգապետ Ալի Եհրլիքային: Նորընտիր պատրիարքի խօսքերով, այսպիսով հայ համայնքի համար նոր փուլ կը սկսի՝ խաղաղութեան եւ միասնութեան շրջան:

Ընտրութեան օրը, Պատրիարքարանի մայր եկեղեցիէն ներս հաւաքուած էին հոգեւոր ու աշխարհական պատուիրակները, որպէսզի գումարեն Ազգային պատգամաւորական ժողով եւ ընտրեն նոր Պատրիարք: Նիստը սկսած է միասնական աղօթքով, ապա շարունակուած պատուիրակներու գրանցման եւ հաւաստագրերու յանձնման գործընթացը: Թէեւ Կիրակի օրուան քուէարկութեան արդիւնքներէն արդէն պարզ էր, որ պիտի ընտրուի Եպիսկոպոս Մաշալեանը, այնուհանդերձ հայ համայնքի համար պահը յիշաւ պատմական էր:

Քուէարկութենէն ետք ընտրեալ Պատրիարքը հանդիսաւոր կերպով մտաւ մայր եկեղեցի, ապա հաւաքուածները շնորհաւորեցին նոր առաջնորդը, համբուրեցին սրբազանի աջը: Այնուհետեւ կայացաւ Հրաշափառի հանդիսութիւնը՝ պատրիարքի մուտքը աթոռանիստ եկեղեցի: Հաւաքուած բազմութիւնը ողջունեց նոր պատրիարքը, տեղի ունեցաւ աջամբուրի արարողութիւնը:

Յիշեցնենք, որ Կիրակի օր տեղի ունեցած էր պատրիարքական ընտրութիւններու առաջին փուլը՝ պատուիրակներու ընտրութիւնը: Քուէարկութեան արդիւնքով նարնջագործներու ճակատը ստացած էր 9008 ձայն՝ Մաշալեան սրբազանի համար ապահովելով 89 պատուիրակ: Պատրիարքական միւս թեկ-



նածու Արամ արքեպիսկոպոս Աթէշեանի գլխաւորած մանիշակագոյն ճակատը ստացած էր 3529 քուէ՝ ունենալով 12 պատուիրակ: Մէկ պատուիրակ նախընտրած էր անկախ մնալ: 753 քուէաթերթ անվաւեր ճանչցուած էր, 376 մարդ դատարկ քուէաթերթ նետած էր տուփը:

Պոլսոյ Զայոց 85-րդ պատրիարք 57-ամեայ Եպիսկոպոս Սահակ Մաշալեանը ծնած է Պոլիս, սորված է Պոլսոյ համալսարանի փիլիսոփայութեան բաժինը, ապա Պոլսոյ արհեստագիտական համալսարանը: 1982-ին որոշած է հոգեւորական դառնալ եւ ուսումնառութեան անցած Պոլսոյ պատրիարքարանէն ներս: Ուշագրաւ է, որ սրբազանը միայն 20 տարեկանին սկսած է հայերէն սորվիլ: Աւելի ուշ, Սահակ Մաշալեանը կրթութիւն ստացած է նաեւ Պեյճիքայի եւ Իրլանտայի մէջ: 1984 թուականին ձեռնադրուած է վարդապետ, 1986-ին Շնորհք Գալուստեան պատրիարքի կողմէ սարկաւազ, 1992-ին ալ Գարեգին Գազանձեան պատրիարքի կողմէ կուսակրօն արքեպիսկոպոս ձեռնադրուած է: 2006 թուականին դարձած է վարդապետ, ապա 2008-ին Եպիսկոպոս ձեռնադրուած է: 2005-2011 թուականներու ընթացքին դասաւանդած է Էջմիածնի Գեորգեան ձեռնարանէն ներս, զբաղեցուցած է տնօրէնի պաշտօն: 2011-ին վերադարձած է Պոլիս եւ ծառայութեան անցած է պատրիարքարանէն ներս: Այս տարուան Մարտին Պոլսոյ 84-րդ պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսիսեանի վախճանէն ետք Յուլիսին ընտրուած է պատրիարքական տեղապահ: Սահակ Եպիսկոպոս Մաշալեանը պիտի ըլլայ Պոլսոյ Սահակ երկրորդ պատրիարքը:

Վարչակազմի Տեսակէտը Կը Մնայ Անփոփոխ

Շարունակուած էջ 1-էն

յի Միացեալ Նահանգներէ հայութեանը, բոլոր այն կազմակերպութիւններին, անհատներին, ովքեր ներդրում են ունեցել այս կարեւոր եւ պատմական որոշման կայացման գործին, եւ ընդհանրապէս շնորհաւորել հայ ժողովրդին ճշմարտութեան այս պատմական յաղթանակի առիթով, - ըսաւ Փաշինեան:

Հայաստանի ղեկավարի խօսքով, Գոնկրէսի գոյգ պալատներու որոշումը նոր էջ կը բանայ Զայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին մէջ:

Փաշինեան շեշտեց որ, Միացեալ Նահանգներու ու շարք մը այլ երկիրներու որոշումները կ'արձանագրեն Թուրքիոյ վարած ապակառուցողական եւ յարձակողական

քաղաքականութիւնը տարածաշրջանին մէջ:

Վարչակազմը յայտնեց որ, Հայաստանի ինչպէս նախկին բոլոր կառավարութիւնները, ներկայիս կառավարութիւնը նոյնպէս պատրաստ է առանց նախապայմաններու յարաբերութիւններ հաստատել Թուրքիոյ հետ:

Միւս կողմէ, Թուրքիա կը շարունակէ բողոքել Մերակոյտին եւ անկէ առաջ Ներկայացուցիչներու Տան կողմէ Ցեղասպանութեան բանաձեւերու ընդունման դէմ: Թուրքիան կը սպառնայ փակել ինժիւրիքի եւ Քիւրեճիքի մէջ տեղակայուած ամերիկեան ռազմականները՝ ի պատասխան Միացեալ Նահանգներու սահմանած պատժամիջոցներուն եւ Զայոց ցեղասպանութիւնը ճանչցող թիւ-

Էդուարդ Թառանեան Նշանակուած է Լոս Անճելըս Գաւառի Բարձր Պաշտօնի



Լոս Անճելըսի մէջ ՀՀ նախկին Հիւպատոս եւ Գլխաւոր Հիւպատոսի նախկին պաշտօնակատ Էդուարդ Թառանեան Լոս Անճելըս Գաւառի կառավարութենէն ներս նշանակուած է նոր պաշտօնի:

2001-ին իր աշխատանքային գործունէութիւն սկսելով Գաւառի Հանրային Ծառայութիւններու Բաժանմունքէն ներս ան վարած է տարբեր պաշտօններ:

2005 թ. առաջադրուած է Իրաւասութեան Վերահսկիչ եւ Ծառայութիւն իրականացուցած է Բաժանմունքի ենթակայութեան տակ գտնուող շարք մը գրասենեակներէն ներս:

Վարչակազմի Գրասենեակի Աշխատանքը

Շարունակուած էջ 1-էն

գրեթէ նոյնքան մարդ ալ կը կարծէ, որ կառավարութեան ձեռքբերումներէն է նաեւ Հանրապետական կուսակցութեան ձախողումը:

Միջազգային հանրապետական հիմնարկէն ներս նկատած են, որ հակառակ լաւատեսութեան դրսեւորումներուն, կան ի յայտ եկող շարք մը հանրային մտահոգութիւններ: Օրինակ՝ կը շարունակէ աւելնալ այն քաղաքացիներու թիւը, որոնք կը մատնանշեն աշխատատեղերու ստեղծումը, ընկերային տնտեսական խնդիրները: Աճած է նաեւ այն մարդոց թիւը, որոնք կառավարութեան ամենամեծ ձախողումը կը համարեն վատ կառավարումը. անոնց թիւը 27 տոկոս է՝ 5 տոկոսով աւելի նախորդ՝ Մայիսին եղած հարցման տուեալներէն: Կառավարութեան ամենամեծ ձախողումներու շարքին քաղաքացիները նաեւ չիրականացուած խոստումներն ու քաղաքական անկայունութիւնը նշած են: Հայաստանի ողջ տարածքին հասարակութեան մօտ կառավարութեան քորուփցիլայի դէմ ջանքերը կը վայելեն մեծ աջակցութիւն, եւ հասարակութեան մեծամասնութիւնը լաւատես է երկ-

2013-ին ան նշանակուած է Պաշտօնէութեան Գրասենեակի շրջանային տնօրէնի տեղակալ:

2018 թուականի Ապրիլին ան տեղափոխուած է Արեւելեան Հովիտի շրջան՝ որպէս տնօրէնի տեղակալ:

Դեկտեմբեր 16-էն սկսեալ վարել Գաւառի Արեւելեան Վարչաշրջանի եւ Սանթա Քլարիթա քաղաքի տարածաշրջանային տնօրէնի պաշտօնը:

Պետական ծառայութեան 18 տարիներու ընթացքին էդուարդ Թառանեան արժանացած է բազմաթիւ պարգևներու եւ գովաստագիրերու:

Միջազգային հանրապետական հիմնարկի Եւրասիա տարածաշրջանի տնօրէն Սթիվըն Նիքսն ըսած է, որ Հայաստանի նախկին բարձրաստիճան պաշտօնեաներու դէմ վերջերս ներկայացուած մեղադրանքները ցոյց կու տան, թէ որքան լուրջ եղած է քորուփցիլայի խնդիրը նախկին վարչակարգի ժամանակ. - «Ոգեւորիչ է տեսնել, որ հարցման արդիւնքները կ'արտացոլեն նոր կառավարութեան հակաքորուփցիլոն ջանքերու դրական ընկալումը», - ըսած է ան:

«Եթէ ընտրութիւններն կայանան այս Կիրակի, որո՞ւն կ'ընտրէիք» հարցին, քաղաքացիներու 55 տոկոսը իշխող «Իմ քայլին» նախընտրութիւն տուած է, նախորդ հարցման ժամանակ իշխանական խմբակցութեան վարկանիշը 4 տոկոսով աւելի բարձր եղած է: «Իմ քայլ»-էն ետք «Բարգաւաճ Հայաստան»-ն է՝ 19 տոկոս, իսկ յետոյ՝ «Լուսաւոր Հայաստան»-ը՝ 6 տոկոս ցուցանիշով: Հարցուածներու 59 տոկոսը ըսած է, որ երբեք չի քուէարկել նախկին իշխող՝ Հանրապետական կուսակցութեան, եւ միայն 4 տոկոսը համաձայն է իր քուէն տալ ՀՀԿ-ին, իսկ 3 տոկոսը պատրաստ է իր քուէն տալ ՀՅԴ-ին:

150 բանաձեւի ընդունման դէմ:

Թուրքիոյ նախագահ Ռեճէպ էրտողանը այս կապակցութեամբ ըսած է. - «Եթէ պէտք ըլլայ, ինձի իրքին ալ կը փակենք. Քիւրեճիքն ալ, ամէն ինչ կախուած է փոխադարձ վերաբերմունքէն: Եթէ մեզ պատժամիջոցներով կը սպառնան, ապա մենք ալ պատասխան քայլեր պիտի ձեռնարկենք: Երկուստեք կարեւոր է, որ Միացեալ Նահանգներն այնպիսի քայլեր չընեն, որոնք անդառնալի հետեւանք-

ներ կը թողնեն երկկողմ յարաբերութիւններու վրայ»:

Ան պնդած է, թէ ամերիկեան կողմի գործողութիւնները չեն համապատասխաներ իրենց դաշնակցային յարաբերութիւններու ոգիին, Միացեալ Նահանգներու Գոնկրէսին յորդորելով վերջ զնեւ երկու երկիրներու փոխյարաբերութիւններու բնոյթի հետ կապ չունեցող հարցերը «ներքաղաքական բանավէճերու առարկայ դարձնելուն»:

Վե՛րջ՝ Քանոնիչ Ատելութեան

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ

Չունին ձայն մի այնքան սիրուն, Քան գանձկալի եղբայր անուն:

Բանաստեղծ Մկրտիչ Պէշիկ-Թաշլեանի վերոյիշեալ տողերը լաւագոյնս կը խորհրդանշեն մարդկային եղբայրութեան ոգին, որ ատելութիւնը կը մերժէ, համերաշխ կեանքի հիմը կը դնէ եւ խաղաղութեամբ ապրելու կոչ կ'արձակէ: Նմանօրինակ ոգիով է, որ բանաստեղծ Միսաք Մեծարենց կը գրէր իր լաւագոյն բանաստեղծութիւններէն մէկը՝ ըսելով. «Դաշտի ճամբու մը վրան,

Կամ ստորտը լերան, Ուղեւորին ժամանման Սպասող հիւղն ըլլայի»:

Եղբայրակցութիւնը բոլոր կրօնական դաւանանքներու եւ շինարար վարդապետութիւններու կողմէ յառաջացուած է, իսկ ատելութիւնը ամէն ձեւով մերժուած է: Դժբախտաբար, սակայն, այդ վարդապետութիւններու եւ կրօններու հոսանքով տարուող ուղղափառ մարդիկ չեն կրցած դարբերու ընթացքին դէմ դնել անոնց, որոնք ատելութեան ձին թամբած՝ քանդած են եղբայրակցութեան հիմերը՝ խանգարելով հանգիստը մարդկութեան:

Դեկտեմբեր ամսու վերջաւորութեան, նոր տարի մտնող մարդկութիւնը ամանորի առթիւ առողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան բարի մաղթանքներով կը յուսայ ունենալ երազանքներով լեցուն ապագայ մը: Ապագայ մը, որուն մէջ ատելութիւնը չխանգարէ հանգիստը մարդոց, պատ քաշելով՝ զանոնք իրարմէ չբաժնէ, սահմաններ գոց պահելով՝ զանոնք տան մէջ բանտարկեալ չդարձնէ, եւ թշնամութիւն սերմանելով՝ եղբայրը եղբօր դէմ չհանէ:

Նոր տարի մտնող մարդկութիւնը այս անգամ եւս լեցուն է ատելութեամբ Հայաստանի շուրջ եւ Լիբանանի մէջ, Սուրիոյ եւ Իրաքի մէջ, Միջին Արեւելքէն մինչեւ Ամերիկաներ եւ շատ մը ուրիշ տեղեր:

Երկու հանրածանօթ կիներ, մէկը՝ ամերիկեան Քոնկրէսի նախագահ Նենսի Փելոզին եւ միւսն ալ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Յակոբեանը, երկուքն ալ ելոյթ ունենալով լրատուական միջոցներու առջեւ, փորձեցին ատելութիւնը շրջանցելով եւ ազնիւ ըլլալու օրինակ տալով՝ յայտարարել, թէ մին Տանըլտ Թրամփը չէր ատեր եւ իրեն համար կ'աղօթէր, իսկ միւսն ալ Ագրպէյճանի նախագահ Ալիեւի կնոջ Արցախ այցելելու հրաւեր տալով՝ զայն կը յորդորէր վերջ տալու ատելութեան, եւ պատերազմներ տեսած Եւրոպայի օրինակը բերելով՝ զայն կը հրաւիրէր վերջ դնելու իրենց երկու ժողովուրդներուն միջեւ պատերազմին:

Սուրիոյ մէջ ատելութիւնը երկիրը քարուքանդ ըրաւ եւ Լիբանանի մէջ ալ երկու ամիսէ ի վեր շահագործողը շահագործողին դէմ հանց:

Ատելութեան ներկայ մթնոլորտը Թուրքիոյ եւ արաբական երկիրներուն միջեւ, գլխաւորութեամբ Սէուտական Արաբիոյ, պատճառ դարձաւ, որ դար մը ամբողջ կրօնական եղբայրակցութեան անունով անտեսուածը այսօր լուսարձակի տակ դրուելով՝ յայտնուէր:

Արդարեւ, Սէուտական Արաբիոյ MBC հեռատեսիլի կայանը Նոյեմբեր 2019-էն սկսեալ 15 դրուագներով (episodes) սկսած է ցուցադրել «Հուրի կայրութիւններ» (Kingdoms of Fire) կոչուող հաղորդաշարը, որուն մէջ կը յայտնաբերուի բնութիւնն ու վայրագութիւնը օսմանցիներուն եւ անոնց արինանարբու պատմութիւնը կը ներկայացուի: Միջին Արեւելքի ամենածաւալուն MBC հեռատեսիլի կայանէն ցուցադրուող այս հաղորդաշարը եկաւ որոշումէ մը ետք, գոր այդ հեռատեսիլի կայանին տնօրէնութիւնը առաւ՝ վերջ տալով տարիներէ ի վեր իր ցուցադրած (արաբերէն թարգմանութեամբ) թրքական բոլոր soap opera-ներուն, որոնք մեծ հետաքրքրութեամբ կը դիտուէին արաբական երկիրներուն մէջ:

Ատելութեան հունտերով լեցուն է արաբիստանի արտը՝ Պաղեստին-Իսրայէլ հանգոյցով եւ Իրան-Սէուտիէ դաւանանքային կնճիռով:

Մկրտիչ Պէշիկ-Թաշլեանի եղբայրասիրութեան կանչէն գրեթէ դար մը ետք, անգլիացի հանրածանօթ երգիչ եւ երգահան Ճոն Լենըն իր հռչակաւոր Imagine երգով կրկնեց այդ կանչը՝ ըսելով. «Երեւակայեցէ՛ք, որ բոլոր մարդիկ կեանքերին ապրին խաղաղութեան մէջ (Imagine all the people living life in peace): Եղբայրութիւնը մարդուն (A brotherhood of man): Երեւակայեցէ՛ք, որ բոլոր մար-

Շար.ը էջ 18

Թուրք Լրագրողը Եթերի Ժամանակ Խօսած Ե Դայոց Ցեղասպանութեան Դետ Առերեսուելու Անհրաժեշտութեան Մասին



Թուրքիոյ ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցութիւնը (CHP) ներկայացնող լրագրող Նեճատ Սարաչը «Halk TV» հեռուստաընկերութեան եթերի խօսած է Հայոց ցեղասպանութեան եւ Թուրքիա բնակող հայերու վիճակի մասին: Այս մասին կը յայտնէ Ermenihaber.am-ը:

Սարաչը նշած է, որ իր մանկութիւնն անցած է Պոլսոյ հայաշատ Շիշլի շրջանի Քուրթուլուշ թաղամասին մէջ, որու շնորհիւ ան հայերու խնդիրներուն քաջածանօթ է:

«Հայերը իսկապէս շատ դժուար կացութեան մէջ են: Թուրքիոյ մէջ շատ դժուար է փոքրամասնութիւն ըլլալը, յատկապէս այն պարագային, երբ իրականութեան

մէջ մեծաթիւ ու ազդեցիկ համայնք ունիս: Մենք մեր ականջներով լսած ենք «Ներողութիւն արտայայտութեան համար՝ հայ» ձեւակերպումը եւ այն երբեք պիտի չմոռանանք», - նշած է լրագրողը:

Յիշեցնենք, որ վերոնշեալ արտայայտութեան հեղինակը էրտողանը եղած է իր վարչապետութեան օրօք: Ան հեռուստաեթերէն ըսած էր, որ ընդդիմութիւնը կը գրպարտէ զինք. «Անոնք զիս վրացի կ'անուանեն: Ներողութիւն արտայայտութեան համար, բայց իմ հասցէին աւելի վատ խօսք ալ ըսած են. անոնք զիս «հայ» անուանած են»:

Ընդդիմադիր լրագրողը նաեւ

Շար.ը էջ 18

Heart Beat DJ

2020 New Year

Celebrate NYE 2020
At Newly Remodeled
AEBU Center
1060 North Allen Ave.
Pasadena Ca 91104

Tickets : \$125
For Reservations call :
Vasken @ 818 2887188
Karine @ 818 3240574
djvasken@yahoo.com

Authentic Appetizers & Dinner By
Raffi's Catering
Midnight Surprises!
Doors open 8:00 pm.

«Ժողովուրդներու Դեմոկրատական» Կուսակցութիւնը Պահանջեց որ Թուրքիոյ Սէջ Ազատօրէն Քննարկուի 1915ին Հայ Ժողովուրդին Ապրած Ողբերգութիւնը

«Հապէհ 7» կայքէջը կը հարգէ որ մինչ Թուրքիոյ մէջ ամէն կողմէ ԱՄՆ-ի դէմ բողոքի ձայներ կը բարձրանային, միայն «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութիւնը (ՀԵ-ՏԷ-ՓԷ) է որ տարբեր կեցուածք ցուցաբերեց, մերժեց ստորագրել խորհրդարանին կողմէ պատրաստուած ու բոլոր կուսակցութիւններու ստորագրութեամբ հռչակուած հաղորդագրութիւնը ու դիտել տուաւ որ այս երկրի մէջ ազատօրէն պէտք է քննարկուի թէ ինչե՞ր պատահեցան 1915ին եւ ինչպէ՞ս տառապեցան այս երկրի հայերը:

ՀԵ-ՏԷ-ՓԷ-ի անունով խօսեցան կուսակցութեան խմբակի փոխնախագահներ Ֆաթմա Գուրթուլան ու Սարուհան Օլուչ, որոնք ըսին. «Խորհրդարանի նախագահութեան կողմէ պատրաստուած յայտարարագրին չենք զօրակցիր, որովհետեւ կը հաւատանք որ Մեծ Եղեռնի իրականութեան հետ առերեսուելու ճամբան այսպիսի յայտարարագրներէ չ'անցնիր: ԱՄՆ-ի Ծերակոյտի մը ընդունուած բա-

նաձեւը մեզի կ'օգնէ որպէսզի ճշմարտութիւնը գտնենք ու վերջերս փաթեթենք, ոչ ալ խորհրդարանի կողմէ պատրաստուած նմանօրինակ հաղորդագրութիւնները: Ճիշդ ալ չենք գտներ որ այսպիսի մեծ ցաւերը գործածուի իշխանութիւններու խաղերու առ հաշիւ:

Պէտք է որ ստեղծենք այն պայմանները որոնք արգելք պիտի ըլլան նմանօրինակ խաղերու: Ասիկա կարելի է ու անհրաժեշտ է: Մենք կ'ուզենք որ այս երկրին մէջ ազատօրէն խօսուի այն մեծ ցաւին մասին, գոր ապրեցաւ հայ ժողովուրդը: Որքան ատեն որ ասիկա չենք ընէր, այս հարցն ալ կը գործածուի տարբեր նպատակներով: Այս հարցը ու այս ցաւերը մեզի կը պատկանին, ուրեմն այդ մասին մենք ենք որ պէտք է խօսինք: Եթէ կարենանք առերեսուիլ, ցաւերն ալ կրնանք դարձանել: Այս խորհրդարանը կրնայ ճամբայ բանալ այս ուղղութեամբ: Մենք պատրաստ ենք ամէն կերպով օգնելու պատասխանատուութիւն ստանձնելու»:

Պոլսոյ Հայոց Պատրիարք Սահակ Եպիսկոպոսի Հանդիպումները

Թուրքիոյ հայոց նորընտիր պատրիարք ամենապատիւ Տ. Սահակ Եպս. Մաշալեան, անցեալ Ուրբաթ, հիւրն էր Իսթանպուլի կուսակալ Ալի Երլիգայայի ամանորեայ ճաշկերոյթին, ջրաղան պանդոկին մէջ:

Ներկաներու մէջ կը գտնուէին Ս. Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձութեան ատենապետ Պետրոս Շիրինօղլու, ինչպէս նաեւ կրօնական եւ դիւանագիտական այլ ներկայացուցիչներ: Կուսակալը՝ հանդէս եկաւ ողջոյնի խօսքով: Ան ընդգծեց Իսթանպուլի կարեւորութիւնը եւ համակեցութեամբ ապրելակերպը: Ան յայտնեց որ իրենց համար պատիւ կը համարէր, որպէս կուսակալ ծառայել նահանգի մը հայրենակիցներուն, որոնց աղօթատեղիները կը գործէին կողք կողքի: Իր խօսքին մէջ շնորհակտեց Հայոց պատրիարքի ընտրութիւնը եւ յաջողութիւն մաղթեց իր առաքելութեան եւ Ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առթիւ յայտնեց իր կանխայայտ շնորհակտութիւնները:

Մաշալեան
Յայտարարութիւնը
«Սապահ»ի Թղթակիցին
Ընտրեալ պատրիարք Ամեն. Տ. Սահակ Եպս. Մաշալեանի հետ հանդիպում մը ունեցած է Պոլսոյ «Սա-

պահ» թերթի թղթակից Ուղուր Փելտըրըմ: Ջրոյցի ընթացքին խօսուած է նաեւ ԱՄՆ-ի Ծերակոյտին կողմէ ընդունուած հայկական բանաձեւի մասին: Պատրիարքը մօտաւորապէս այսպէս խօսած է. «Կարգ մը բաներու պէտք չէ կարեւորութիւն տալ: Մենք Թուրքիոյ հայերս, հայերու դէմ անպատշաճ եղելութիւն կը նկատենք հարիւր տարի առաջ, այս հողերուն վրայ ապրուած ցաւերուն ուրիշ երկիրներու խորհրդարաններուն մէջ որպէս քաղաքական ազդակ գործածութիւնը:

«Մենք կ'ուզէինք որ այս հողերուն վրայ ապրուածներուն մասին խօսէինք այս հողերու վրայ: Երրորդ կողմերը՝ ովկիանոսներու հեռավորութենէն կը խօսին, որովհետեւ հոս շահագրգիռ կողմերը չեն կրնար խօսիլ: Երանի թէ երկու երկիրներու միջեւ ստորագրուած փրոթոքոլներն աշխատէին, հասարակաց պատմութիւն մը կարենայինք հաստատել: Ես քաղաքագետ չեմ, այս դէպքերուն մեկնաբանութիւնը քաղաքագետներու գործն է: Մենք Թուրքիոյ հայերս, թուրքիոյ ժողովուրդին հետ նոյնացած ենք, ճակատագրի միասնութիւն հաստատած ենք: Մենք հարիւր տարի առաջ ապրուածները մոռցանք չիշելով, կը չիշենք մոռնալով: Թուրքիոյ հայերուն ընտրութիւնն այս է»:

Ստահոգիչ եւ Պայթուցիկ Դրութիւն Լիբանանի Սէջ

Լիբանանի ներկայ քաղաքական եւ տնտեսական ճգնաժամին վերջ տալու նպատակով նախագահ Աունի հրահանգով երեսփոխանական պարտադիր խորհրդակցութիւններ նախատեսուած էին Երկուշաբթի Դեկտեմբեր 16ի համար: Այս առթիւ ժամանակէն առաջ ցուցարարներ համախմբուեցան խորհրդարանին շուրջ եւ հակասական վանկարկումներով ու լուզումներ իրարանցում մը ստեղծեցին, որուն հետեւանքով միջադէ-

պեր եւ բախումներ եղան ցուցարարներու եւ ապահովութեան ոյժերու միջեւ:

Օրակարգի գլխաւոր հարցը նոր եւ մասնագէտներէ բաղկացած կառավարութիւն մը կազմելն է, որուն համար խոր տարակածութիւններ կան քաղաքական տարբեր հոսանքներու միջեւ:

Ժողովուրդը դրական եւ արմատական լուծում կը պահանջէ: Կացութիւնը կը մնայ մտահոգիչ եւ պայթուցիկ:

Պոլսոյ «Մարալ» Երգի-Պարի Համոյթը Սեժ Համերգով Նշեց իր 40-Ամեակը

Պոլսոյ «Մարմարա» թերթէն կ'իմանանք թէ տեղույն հասցեան Միութեան «Մարալ» երգի պարի համոյթը փառաշուք կերպով նշեց իր հիմնադրութեան 40 ամեակը, հովանաւորութեամբ նորընտիր պատրիարք Ամենպ. Տ. Սահակ Եպս. Մաշալեանի: Այս առթիւ թերթի աշխատակիցը կը գրէ. «...Ջմալյանքով դիտեցինք բոլորը, որովհետեւ երկարատեւ, տքնաջան աշխատանքի, անվերջ փորձերու պսակումն էին պարերը...: Դժուար էր լաւագոյնի ընտրութիւնը կատարել պարերու մէջէն: Այդպիսի յատուկ «ստորագրութիւն» մը դրին «կարօտ», «հին թիֆլիսի պատկերներ» եւ «Ով Հայոց Աշխարհ» պարերը:

Ներկաներու երկարատեւ ծափերը ապացոյցն էին բարձրորակ ելոյթներու արտակարգ յաջողութեան:

Ընտրեալ պատրիարք Սահակ

Եպս. Մաշալեան իր սրտի խօսքն արտասանելով նոյնպէս իր հիացումն արտայայտեց պարգուած տեսարանին առջեւ: Ան ըսաւ որ «Մարալը փաստեց որ պոլսահայութիւնը կ'ապրի, փաստեց որ վերելքը կը շարունակուի ու հիմնադիր, ողբացեալ Պենոն Գուրուպաշ, որ քառասուն տարի առաջ հիմնած էր այս խումբը, հաւանաբար չէր կրցած երագել այսօրուանին: Բայց իսթանպուլցիներուն սրտին մէջ տնկեց այնպիսի ծառ մը, որ քառասուն տարիէ ի վեր պտուղ կու տայ ու մենք կը վայելենք այդ համը»: Գնահատեց Մարալի մեծ ընտանիքը ու մաղթեց որ երազը շարունակուի:

Որպէս վերջին խօսք, կրնանք ըսել որ մարալցիները կը հաւատան հայապահպանութեան առաքելութեան, ու պարի ճամբով հայ մշակոյթը կը ջամբեն մեր նորահաս սերունդին:

Հրանդ Տինքի Մասին «Վոսփոր» Թատրերգութիւնը Մրցանակ Շահեցաւ

«Վոսփոր» թատրերգութիւնը, որուն համահեղինակներն են Կորին Ափրիկեան եւ Էրիք տը Ռոքֆֆօյ, Փարիզի Գրոթ թաղամասի «Ռոսին» սրահին մէջ, Հրանդ Տինքի սպանութեան 10րդ տարիցին առթիւ կազմակերպուած յուշերեկոյին արժանացաւ Արթսէնա (Կրկէսի ու փողոցի արուեստներու եւ թատրոնի ազգային կեդրոն) հեղինակաւոր մրցանակին:

Կորին Ափրիկեան այս պատուաբեր գնահատանքին պատճառած հպարտութենէն անդին յոյս ունի, որ այս մրցանակը իրենց թոյլ պիտի տայ գործը վերջապէս բեմականացնելու:

«Վոսփոր» եղբրբախտ խմբագրին կեանքին մէջ, վստահաբար երեւակայական, դրուագը խոշորացոյցի տակ կ'առնէ, փոխաբերութիւններով եւ երբեմն ալ անպատասխան մնացող հարցականներով:

Տեսարանը կը սկսի Պոլսոյ քարափին, ուր Հրանդը կը սպասէ իր վաղեմի ընկերոջ՝ ձկնորս Նետիմին, գոր տարիներէ ի վեր չէր տեսած, մինչեւ վերջ ալ անյայտ մնացած պատճառներով: Նետիմը չի գիտեր, թէ ինչ է տարիներ ետք տեսակցութեան այս հրաւերին պատճառը, ան պիտի տեղեկանայ աւելի ուշ Հրանդի բերնէն:

Now serving Glendale, Burbank, and Pasadena

բայց մինչ այդ հասցուցած է գիտական նշանակալի գործ կատարել, ինչպէս նաեւ սպաներէնէ հայերէնի թարգմանել բազմաթիւ գրական ստեղծագործութիւններ: Վահան Սարգսեան կը տիրապետէր նաեւ ֆրանսերէնի եւ պասքերէնի եւ իր պրպտումներուն շնորհիւ, գտած է հայ-պասքեան պատմական ու ներկայաւրընչութիւնները: Գիտնական-լեզուաբանը խմբագրած է նաեւ «Արաքս» հայ-պասքեան ամսագիրը. ան պատուաւոր անդամ էր Պասքերու երկրի Թագաւորական ակադեմիայի, Սպանագէտներու համաշխարհային ընկերութեան եւ Պասքագէտներու միջազգային ընկերութեան: «Արաքս» ամսագիրը հիմնելով 1993 թուականին՝ Երեւանի Պետական համալսարանի Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկին մէջ, նպատակ ունէր հայ-պասքեան առընչութիւններուն մասին նիւթեր տպագրել եւ իբրեւ տպագիր աղբիւր տարածել զայն: Միջազգային այդ ամսագրի խմբագիրները դարձան աշխարհի գանազան երկրներու անուանի հայագէտներ ու պասքագէտներ: Ամսագրին մէջ հրատարակուեցաւ երեսուց փոստական աշխատութիւն, որոնք կ'ուսումնասիրէին պասքերէնի ու հայերէնի վերաբերող գանազան հարցեր՝ լեզուաբանութենէն մինչեւ ազգագրութիւն: Օրինակ՝ ըստ այդ ուսումնասիրութիւններուն, երկու լեզուներուն մէջ «չ» ժխտածանցը ունի նոյն իմաստը, իսկ բառերուն վերջաւորութեան աւելցող «ք» տառը կ'արտայայտէ յոգնակին: Ասկէ զատ, երկու լեզուներուն մէջ կը համընկնին նաեւ բայերուն խոնարհումները:

Վահան Սարգսեանի ուսումնասիրութիւնները դարձած են հայ-պասքեան կապերը վերջնականապէս ամրագրող գիտական աշխատութիւններ, որոնցմէ կ'օգտուին այս նիւթով հետաքրքրուող մարդիկ: Անոր ձգած աւանդը կը

Շար.ը էջ 19

Just listed!

39228 Raphael Ln, Palmdale, CA 93551

- 3 Bedrooms
- 2478 Square Feet
- 7096 Square Foot Lot
- 2.5 Baths
- Year Built: 1997
- 2 car attached garage

Exceptional two story KB home on private cul-de-sac. Fully furnished and move-in ready. Many upgrades throughout, including ceramic tile floors, custom kitchen, remodeled bathrooms. Ample backyard, replete with abundant flora, bountiful fruit trees, a gurgling Koi pond and inviting pergola. Schedule a private viewing today.

Offered at: \$475,000

Nick Karasarkisian
 Broker/Owner
 213-706-9990
 E-mail: nickkarasarkisian@gmail.com
 CalBRE # 01022153

Information deemed reliable but not guaranteed

Հոգեւոր Հայրենիք. Մադրասն Ու Սուրբ Ղազարը

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԵԱՆ

Ընդունուած կարգ է: Ասում են պատմութիւնը «եթեան» չի սիրում: Բայց ես համաձայն չեմ դողմատիկ այս ճշմարտութեան հետ: Լաւ էլ սիրում է: Առանց «եթեի» մենք զրկուում ենք այլընտրանք գտնելու հնարաւորութիւնից: Անցեալի այլընտրանքը ներկայի գաղափարական բազմազանութեան երաշխաւորն է: Այսինքն եթէ անցեալը միազոյն պատկերէնք, ապա ինքնաբերաբար կատեղծենք գորշ իրականութիւն՝ առանց այլընտրանքի հնարաւորութեան: Մեզ թւում է, թէ 19-20-րդ դարերը Հայոց պատմութեան ամենաողբերգական շրջափուլերն են: Երիցս ո՛չ: Չնայած միլիոնաւոր մարդիկ դատապարտուեցին ցեղասպանութեան, բայց, այնուամենայնիւ հայ իրականութիւնն ապրում էր ու շնչում, պայքարում էր ու մինչեւ վերջին շունչը կուռում: Վանի հերոսամարտը ասուածի վառ ապացոյցն է:

Իմ համոզմամբ Հայոց պատմութեան ամենաողբերգական շրջափուլը 16-18-րդ դարերն են: Մութ ու անասարսուռ մի ժամանակաշրջան, երբ հայերը կարողանում էին միայն աղօթել, առեւտուր անել ու սպանուել կամ էլ՝ արտագաղթել: Եկեղեցին, խճուղիները կապիտալն ու հեծեծվող գիւղացին: Հէնց այդ շրջանում է, երբ քաղաքակրթական զարգացվածութեան չափազանց բարձ մակարդակ ունեցող, պետականաստեղծ ժողովուրդը մի քանի հարիւրամեակի ընթացքում փոխակերպվեց էթնոկրօնական պարզունակ հանրույթի՝ Հայկական Վատիկանի՝ էջմիածնի անգէն, բայց ծանր տիրապետութեան տակ: Հետաքրքիր է, այդ ինչպէ՞ս ստացուեց, որ թուրքմենական, թիւրքական ու պարսկական տիրապետութեան պայմաններում հայ ժողովուրդը չանհետացավ պատմութեան թատերաբեմից, չ'է որ ոչնչացման համար կային բոլոր նպաստաւոր պայմանները՝ ներքին ու արտաքին: Ներսից այն ինքնատէրացվում էր իր իսկ քարացած յետադիմութեան նահապետական տիղմի մէջ, իսկ դրսից նրան ոչնչացնում էին օտար նվաճողները: Ճիշտն ասած ես չգիտեմ, թէ ինչու հայերը այդպէս էլ չհեռացան պատմութեան թատերաբեմից, իսկապէս չափազանց լուրջ հարց է, բայց ցաւօք արտի մենք հեռացել ենք պատասխանը գտնելու հնարաւորութիւնից՝ փրկուելու վերագրելով եկեղեցուն ու նահապետական աղաթներին: Սա ի հարկէ միջ է, որը դարեր շարունակ կաթացրել են մարդկանց ականջներին՝ աստիճանաբար դրան գիտականութեան կարգավիճակ շնորհելով:

Վերադառնանք «եթէ»-ի հիմնախնդրին: 16-18-րդ դարերում բուն Հայաստանը՝ որպէս վարչաքաղաքական, տնտեսական ու մշակութային միաւոր, ոչնչացուած էր՝ անշարժ ու քարացած մի տարածք:

Բայց ամէն ինչ այդքան էլ պարզ չէ, քանի որ չունենք այն գլխաւոր հարցի պատասխանը: Պարզ չէ նաեւ այն իմաստով, որ հայ ժողովուրդը ամենեւին էլ չէր պատրաստուում հեռանալ պատմութեան թատերաբեմից: Նա պէտք է յարութիւն առնէր չզոյուլութիւնից, եւ այդ յարութիւնը պէտք է տեղի

ունենար ոչ թէ կազմաքանդված ու անշարժացած հայրենիքում, այլ՝ դրսում, այսինքն՝ գաղթօջախներում: Գաղթօջախներն ի հարկէ մեծ թիւ էին կազմում, բայց խնդիրը քանակի մէջ չէ: Մեծ հաշուով հայ ժողովուրդը երկու անգամ է փկվելու ու ապրելու նշաններ ցոյց տվել՝ առաջինը Հնդկաստանի Մադրասում, իսկ երկրորդը՝ Վենետիկի Սուրբ Ղազարում: Ինչպէս ծովում խեղդուած մարդն է յանկարծակի կենդանութեան անգուսպ ճիւղ արծակում, այնպէս էլ հայ ժողովուրդը որպէս օրգանիզմ իր կենդանութեան ճիւղն արծակեց Մադրասում եւ Սուրբ Ղազարում:

Ինչ կը լինէր հայերի հետ, եթէ չլինէին Մադրասի խմբակն ու Միսիթարեան միաբանութիւնը, չգիտեմ, իսկապէս չգիտեմ, բայց մի բան յստակ է, որ իրարից անկախ, աշխարհի հակառակ կողմերում մի խումբ մարդիկ գիտակցում էին իրենց պատմական առաքելութիւնն ու աշխատանքի քաղաքակրթական նշանակութիւնը:

Ղեւնդ Ալիշանը հասկանում էր, որ հայաստանցին կորցրել է հայրենիքի հոգեւոր սահմաններն ու ընդհանրապէս դրա գիտակցական պատկերը: Նա երբեք չէր եղել Հայաստանում, բայց գծում էր դրա սահմանները:

Մադրասում հասկանում էին, որ ստրկացված ժողովուրդը ապստամբութեան ու ազատագրական



պայքարի պէտք ունի: Այդ մեծ ճանապարհին նրանք ծրագրեր էին մշակում ու ելքեր փնտրում:

Սուրբ Ղազարում գիտակցում էին, որ հայ ժողովուրդի ինքնութեան մեխը հայոց լեզուն է, որը պաշտպանութեան կարիք ունի: Արդիւնքում ստեղծուեց կոթողային այն բառարանը՝ հայերէնի անվտանգ գոյութեան պահպանն ու պաշտպանը:

Մադրասում գիտակցում էին, որ բուն հայրենիքում ժողովուրդը ինքնակազմակերպման կարիք ունի եւ այդ նպատակի համար Հայաստան էին գործուղում Յովսէփ Էմինին, որը խորհրդացու Հայոց պատմութիւնը թեւի տակ փորձում էր մարդկանց նախապատրաստել ազատագրական պայքարի: Յաւօք արտի հայ գիւղացին այլեւս ի գորու չէր ճանաչել ո՛չ խորհրդացուն եւ ո՛չ էլ նրա գիրքը: Ինչպէս վերեւում նշեցինք կապը խզուած էր:

Մի քայլ Չամչեանը հասկանում էր, որ հոգեւոր հայրենիքի վերականգնման համար անհրաժեշտ է վերակենդանացնել նրա



անցեալը, ինչպէս ժամանակին արել էր խորհրդացին: Հէնց այդ նպատակով նա շարադրեց հայ պատմագիտութեան ամենանշանաւոր աշխատութիւններից մէկը, որից մինչ օրս կառչաց ենք:

Մադրասում հասկանում էին, որ հոգեւոր հայրենիքի սաղմնավորման համար անհրաժեշտ է քննադատաբար վերաբերուել անցեալին ու դրա հիմքի վրայ էլ ստեղծել նոր իրականութիւնը: Արդիւնքում ստեղծուեց «նոր տետրակ որ կոչի յորդորակ» աշխատութիւնը, որը կասկածի տակ դրեց անցեալի անսխալականութիւնն ու ճշմարտացիութիւնը:

Վենետիկում վերստեղծվում ու ստեղծուում էր հայկական հոգեւոր իրականութիւնը, իսկ Մադրասում հոգեւորն այդ իրաւական ու քաղա-

քանի որ առանց ներքին տրամախօսութեան մարդկային խմբերը դատապարտուած են կործանման: Թերեւս հայ իրականութեան առաջին տեքստային բանավէճը տեղի է ունեցել հէնց Ազդարարի էջերում, որտեղ Շահամիր Շահամիրեանն ու Մովսէս Բաղրամեանը բանավիճում էին հայ ժողովուրդի ապագայի ու զարգացման հեռանկարների վերաբերեալ: Ի դէպ յօդուածները ստորագրուած են ծածկանուններով:

Հիմա նորից վերադառնանք այն յայտնի հարցին, ինչ կը լինէր հայ հանրույթի ու ընդհանրապէս հայկական իրականութեան հետ, եթէ չլինէին Սուրբ Ղազարն ու Մադրասը:

Փաստօրէն բուն հայրենիքում մահուան դատապարտուած մարմինը վերածնվեց հայրենիքից դուրս: Այն վերստին սաղմնավորվեց, մարմնաւորվեց ու վերադարձավ հայրենիք: Կասկածից դուրս է, ինչպէս ազգային ազատագրական, այնպէս էլ հոգեւոր-մշակութային յետագայ պայթիւնի հիմքում ընկած են հէնց Մադրասն ու Սուրբ Ղազարը:

Մասնագէտներից շատերը պնդում են, թէ արդի Հայաստանի հիմքում ժառանգորդութեան սկզբունքով ընկած են Հայկական մարզը, Երեւանի նահանգը, Առաջին Հանրապետութիւնն ու խորհրդային Հայաստանը: Ճիշտն են ասում, բայց մոռանում են աւելացնել, որ հոգեւոր մշակութային տեսանկիւնից արդի հայկական պետութիւնը ժառանգորդն ու արդիւնքն է նաեւ Սուրբ Ղազարի ու Մադրասի: Աշխարհի երկու ծայրերում գոյող տարասեռ իրականութիւններ, որտեղ իրարից անկախ ստեղծուում ու սաղմնավորվում էին հոգեւոր ու գրութային հայրենիքները:

Յաւօք արտի մենք մոռացել ենք Մադրասի ու Սուրբ Ղազարի մասին: Ինչ-որ երկրորդական արժէքներ են շրջապատել ու շրջափակել մեզ: Կիսագրագէտ գանգուածները ինքնութիւն փնտրում են այնտեղ, որտեղ այն պարզապէս չկայ՝ կենսաբանական միաւորների, յետադիմական աղաթների, մոլեռանդ կղերականութեան, ծակող փշերի ու տատակի մէջ:

«Ոսկերեան» Գրադարանի Բացում

Պոլսոյ Թագաթիմ հրատարակի Ոսկերեան եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր արարողութեամբ, նշուեալ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի տօնն ու Սուրբ Յակոբ հիւանդանոցի անուան տօնախմբութիւնը: Օրուան պատարիզին էր Պոլսոյ Հայ Կաթողիկէ համայնքի վիճակաւոր Արհիպատիւ Տ. Լեւոն Արք. Ձէքիյեան:

Պատարագէն ետք սարքուեցաւ հիւրասիրութիւն հոգաբարձութեան կողմէ: Կատարուեցաւ նաեւ «Ոսկերեան» գրադարանի բացումը, մասնակցութեամբ «Արաս» հրատարակչատան:

Յովհաննէս Թումանեան-150. Երեք Գրքի Շնորհանդէս` Թբիլիսիում

2019 թուականի Դեկտեմբերի 11-ին, Թբիլիսիում, Վրաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարարութեան հանդիսութիւններէ սրահում կայացավ միջոցառում, որը դարձավ Յովհաննէս Թումանեանի երեք նոր գրքերի շնորհանդէս եւ երկու հանձարների՝ Թումանեանի եւ Կոմիտաս վարդապետի 150-ամյայ յոբելաններին նուիրուած միջոցառումների ամփոփում:

Իրենց օրհնաբեր ներկայութիւնն էին բերել Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տէր Կիրակոս վարդապետ Դաւթեանը, Ախալքալաքի եւ Գումբուրդոյի միտրոպոլիտ Գերաշնորհ Նիկողոս Փաշտաշվիլին, քոյր եկեղեցիների առաջնորդներ, վիրահայոց թեմի հոգեւորականաց դասը:

Միջոցառմանը ներկայ էին Վրաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի առաջին փոխնախարար Բադրի Մախաւաճեան, Վրաստանի հաշտութեան եւ քաղաքացիական հաւասարութեան նախարարութեան, Աբխազիայի մշակույթի նախարարութեան բարձր պաշտօնեաներ, Վրաստանի խորհրդարանի անդամներ, դիւանագետներ, համայնքային գործիչներ, հասարակայնութեան ներկայացուցիչներ:

Րակական գործիչների խոշորագույն պանթէոնում: Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լրագոր դեսպան Ռուբեն Սաղոեանը կարեւորեց Թբիլիսիում Ամենայն հայոց բանաստեղծի արձանի տեղադրումը, ընդգծեց, որ դեսպանութիւնը շարունակում է աշխատանքներն այդ ուղղութեամբ:

Դահլիճում ներկայացուած էին Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամյայ յոբելանին նուիրուած երեք նոր գրքերը: «տասը հեքիաթ» ժողովածուն, որտեղ գետեղուած են վրացի բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլի կողմից թարգմանուած Թումանեանի չորս հեքիաթները, աւելացել էր եւս վեց հեքիաթ, որոնց թարգմանութիւնն իրականացրել է բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը: Վերջինս իր խօսքում անդրադարձ կատարելով Յովհաննէս Թումանեանի մեծութեանը, կարեւորեց նրա հեքիաթների պարզ ու հասկանալի, խրատական, փրկիստփայական եւ արդիական լինելը, որոնք հարազատ են հասարակութեան բոլոր անդամներին՝ մեծից-փոքր եւ փոքրից-մեծ: Նկարագրողումներն իրականացրել են Իվանէ Կեզուան եւ Շորենայ Չաչանիձեն: Հեքիաթների գրքի թարգմանութեան, հրատարակութեան եւ տպագրութեան աշխատանքները իրականացրել է Երե-



իրականացումը նաեւ մայր հայրենիքից դուրս ազգային պահպանելու, ներկայացնելու, տարածելու աշխարհասփիւռ հայութեանը ընդհանուր լավագոյն միջոցներից է: Ժամանակին ստեղծուած յոբելանական յանձնաժողովը, որն իր կազմում ընդգրկում էր Թբիլիսիի եւ հայաբնակ տարածաշրջանների հայկական կառույցների ներկայացուցիչներին, վիրահայոց թեմի այն ժամանակի առաջնորդ Գերաշնորհ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի նախագահութեամբ, բարձր մակարդակի միջոցառումներով նշեց Թումանեանի, Կոմիտաս վարդապետի յոբելանները Թբիլիսիում, Ախալքալաքում, Նինոծմինդալում, Ախալցիխեում, Բաթումիում, Մառնեուլիում եւ միւս հայաբնակ վայրերում, գրեթէ ամենաբազմաթիւ միջոցառումներ իրականացվեցին «յովհաննէս Թումանեանի տուն», «հայաստան», «ուֆայէլ Ջավախ» կենտրոններում:

Յոբելանական յանձնաժողովի անունից երախտագիտութեան խօսքեր ուղղուեցին Վազգէն Սբազանին՝ միջոցառումները նախանշելու, համակարգելու եւ ծրագրի՝ իր գլխավորութեամբ մասամբ իրագործելու համար:

Յոբելանական միջոցառումների իրականացմանը հայրական օրհնութեան եւ առաջնորդական աջակցութեան համար վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տէր Կիրակոս վարդապետ Դաւթեանին փոխանցուեց Վիրահայոց թեմի «Յովհաննէս Թումանեան-150» յուշամեդալը: Երեւանի Թումանեանի թանգարանը «Յովհ. Թումանեան-150» յուշամեդալով պարգեւատրեց բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարին, Վրաստանի գրողների միութեան համանախագահ Մաղվալայ Գոնաշվիլիին եւ «Յովհաննէս Թու-

մանեանի տուն» կենտրոնի ղեկավար Գիսէ Յովսէփեանին: Իսկ Թումանեանի ծոռնուհի Ալիոնայ Կոլենիկովան «Յովհ. Թումանեանի տուն» կենտրոնին նուիրեց ընտանեկան մասունքներից:

Միջոցառումն ամփոփեց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տէր Կիրակոս վարդապետ Դաւթեանը: Իր օրհնութիւնը յղելով կազմակերպիչներին, Հայր Սուրբը գնահատանքի խօսք ասաց Գերաշնորհ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանին, Վրաստանի եւ Հայաստանի Մշակույթի նախարարութիւններին, Երեւանի Յովհաննէս Թումանեանի թանգարանին, Վրաստանի գրողների միութեանը, Վրաստանում ՀՀ դեսպանութեանը, «վրաստան» թերթին, Թբիլիսիի Պետրոս Աղամեանի անուան հայատեղրամայի թատրոնին, պետական, հասարակական, համայնքային բոլոր կառույցներին, Վրաստանի հայկական դպրոցներին՝ Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտաս վարդապետի յոբելանական միջոցառումները շաւուր պատշաճի իրականացնելու համար:

Իրենց ասմունքով, երգով եւ նուագով միջոցառումը գեղեցկացրին թիւ 104 դպրոցի աշակերտներ Ալիսա Ումուրշատեանը, Դաւիթ Մաղալովը, երաժիշտ Եսայի Աբովեանը, «Մակար Եկմալեան» եկեղեցական երգչախմբի մենակատար Սետլանայ Տատեւան, նրա սան էլեն Ռեյհանովան: Յոբելանական երեկոն ամփոփուեց Կոմիտասի երաժշտութեամբ, որը կատարեց Կոնստանտին Վարդելիի անուան լարային քառեակը պրոֆէսոր Էռնստ Առաքելովի ղեկավարութեամբ:

Շնորհանդէսը վարեցին «Յովհաննէս Թումանեանի Տուն» կերոնի ղեկավար Գիսէ Յովսէփեանը եւ վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրէն Սուրէն Աբրամեանը:



Երեւանից ժամանել էր հեղինակաւոր պատուիրակութիւն՝ Թումանեանի թանգարանի տնօրէն Անի Եղիազարեանի գլխավորութեամբ: Դահլիճը գարդարել էր «արմէնպրես» գործակալութեան «յետահայեաց» ցուցահանդէսը, որտեղ ներկայացուել էին գործակալութեան կողմից Թումանեանի 100-ամյակի առթիւ պատրաստուած ու ներկայացուած լուսանկարները:

Վրաստանի Մշակույթի դէպարտամենտի աշխատակից Նանայ Դոլիձեն, Հաշտութեան եւ քաղաքացիական հաւասարութեան նախարարութեան ներկայացուցիչ Թինա Ղոզեիլանին, բանասիրական գիտութիւնների դոկտոր Վարդան Դեւրիկեանը, Երեւանի Թումանեանի թանգարանի տնօրէն Անի Եղիազարեանը, «արմէնպրես» գործակալութեան տնօրէն Արամ Անանեանն իրենց ելուցներում անդրադարձ կատարեցին Լոուի Դսեղ գիւղում ծնուած եւ տարիներ անց Թբիլիսիում հաստատուած, իր ողջ գիտակցական կեանքը ժողովուրդների բարեկամութեան փառաբանմանը նուիրած Յովհաննէս Թումանեանի կեանքին եւ գործունէութեանը, ում աճիւնը ամփոփուած է Թբիլիսիի հայ գրողների եւ հասա-

լանի Թումանեանի թանգարանը: Վրաստանի գրողների միութեան համանախագահ Մաղվալայ Գոնաշվիլին մանրամասն խօսեց «Թումանյան-150» գրքի մասին, որի հրատարակութիւնն իրականացուել է Վրաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարարութեան «բազմազգ Վրաստան» ծրագրի շրջանակներում: «Թումանյան-150»-ում տեղ են գտել Թումանեանի չթարգմանված քառեակները, ավելի վաղ թարգմանուած մի քանի բանաստեղծութիւններ եւ նամակներ: «Թումանեան լուսեղէն» կազմել է վրացագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր Հրաչյայ Բայրամեանը եւ ընդգրկում է Թումանեանի՝ Վրաստանին ու վրաց բարեկամներին նուիրուած բանաստեղծութիւնները, յօդուածները եւ նամակները, ինչպէս նաեւ վրացի գործիչների՝ Թումանեանին ուղղուած նամակները, բանաստեղծութիւնները, գնահատականները: Գիրքը տպագրուել է ՀՀ Մշակույթի նախարարութեան, վիրահայոց թեմի եւ անհատ բարերար Սերգէյ Սիմոնեանի ծախսերով: Յոբելանների նշանաւորումը, համատեղ միջոցառումների

ՊԵՐՃ ԳՐԱՏՈՒՆ BERJ BOOKSTORE
(818) 588-0073 (747) 238-6934

Այժմ, ձեր ցանկացած գիրքերը գնելու համար, կրնաք այցելել մեր տաղաւարը՝ ամէն Կիրակի ժամը 10:00-էն 2:00-ը

Սրբոց 'Ատնդեանց Մայր Տաճարի մուտքին:
Տասցէ՝ 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Now, every Sunday, 10:00 a.m.-2:00 p.m.
you will find your preferred books in our booth
at the main entrance of **St. Leon Armenian Apostolic Cathedral.**
Address: 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Ինչպես Դառնալ Կայծ ու Վառել Շրջապատողներուն Սրտերը Կինը Հիասքանչ Դարձնող Բնաւորութեան Գիծեր

Արուեստը կը սորվեցնէ, որ ինչն է այսօրուան «իրական» գեղեցկութիւնը՝ հաստ շրթունքներ, կազմուածք, իսկ բացը կա ընկի է լրացնել վառ դիմապարզարման միջոցով՝ վրձինի քանի մը թափահարում, եւ դուք արդէն «արքայադուստր» էք:

Սակայն, կինը հիասքանչ չի դառնար շրթներկով, ապարանջանով կամ նիհար կազմուածքով: Իրական գեղեցկութիւնը աւելին է, քան արտաքին տեսքը:

Եւ այսպէս... Ինչպիսիւն պէտք է ըլլան իրական գեղեցկութիւնները:

- Տարուածութիւն: Առանց սիրելի գեղամուկներու եւ կրքի կինը անհետաքրքիր է: Յաճախ դժուար է գտնել ժամանակ դուք բեզի տրամադրելու համար: Բայց քեր որեւէ բանով տարուած էք, ունիք նախասիրութիւն, ուրեմն ատիկա փրկութիւն է:

Ծանր աշխատանքային օրէ մը ետք կը վերադառնաք տուն եւ կը գբադիք ձեր սիրելի գործով: Իսկ հոգին կ'երգէ...

Կեանքը չի սահմանափակուիր միայն աշխատանքով: Տարուած մարդը կարելի է տարբերել ամբողջին. անոր աչքերը կը փայլին առանձնապատուկ կերպով:

- Հոգեւոր ջերմութիւն: Պաղարիւն, անձնասէր կանայք միայն կը սիրեն իրենք գիրենք: Ի հարկէ, իւրաքանչիւրը պէտք է սիրէ ինքզինք, սակայն քիչերու համար հաճելի են ինքնասիրահարուած ներք: Եթէ կինը չի կրնար օգնել, աջակցութիւն ցուցաբերել, ո՞վ պիտի աշխատէ իրեն... Իսկ յայտնի փաստ է՝ մարդը հասարակութեան մէջ մասն է: Հոգեւոր ջերմութիւնը մագնիսի նման կը գրաւէ մարդիկը...

- Մտածողութիւն: Մեր մշակույթին մէջ դեռ կը շարունակէ գերիշխել այն կարծիքը, թէ իրենց հետեւող, գեղեցիկ կանայք լիմարիկ են: Կարծրատիպը ունի երկու կողմ,

այսինքն՝ խելացի կանայք տգեղ են, անոնց համար գոյութիւն ունին միայն աշխատանքը, գիտելիքն ու ասպարէզը, իսկ իրենց հետեւելու համար ժամանակ չեն գտներ:

Տարօրինակ կարծրատիպեր են: Ատիկա նոյնն է, երբ գրողը երբեք գիրք չկարդայ, կամ ամէն մէկս գոչենք, որ աշխարհը

չենք ուզեր հասկնալ, թող աշխարհը հասկնայ մեզի:

Արդէն իսկ գիտելիքի ձգտիւն ու խելացի ըլլալը գրաւելութեան չափանիշ են:

- Դրական ներուժ: Ոչ ոք կը սիրէ փնթիւնի, բացասական ներուժ հաղորդող մարդիկ: Ի հարկէ, ատիկա չի նշանակեր, որ կինը միշտ պիտի ըլլայ հիանալի տրամադրութեամբ. Կեանքի մէջ շատ կը պատահին տհաճութիւններ, երբ տխուր ըլլալը բնական է: Բայց ամէն բան աւարտ ունի: Հարկաւոր է ժամանակ գտնել, հաւաքել ուժերը ու կրկին ժպտիլ աշխարհին:

- Հաստատակամութիւն: Կանայք, որոնք ձեռքերը երբեք վար չեն դնել, հրաշք են: Հաստատակամութիւն ամէն ինչի մէջ՝ յարաբերութիւններու, ասպարէզի, մարզանքի... Աշխարհը կը սիրէ մարտիկները:

- Ինքնավստահութիւն սեփական ուժերու հանդէպ: Ինքնավստահ կինը գիտէ իր արժէքը: Ան լուռ կը հպարտանայ անոր համար, թէ ինչ տեսք ունի, ինչ կեցուածք, խելք ու խօսելաոճ:

Ան կ'ընդունի ինքն իրեն ու իսկապէս ինքնաբաւ է: Ատիկա գեղեցիկ է:

- Ապրելու ցանկութիւն: Իրականութեան մէջ ապրելու ցանկութիւնը վերը թուարկածներու հաւաքական գիծն է: Երբ կինը տարուած է, կրքոտ, խելացի, ուրախ, գրաւիչ ու ինքնավստահ, ան հիասքանչ է: Ան կը դառնայ կայծ ու կը վառէ շրջապատողներուն սրտերը:

Ուղեղին Պէտք են Ընթերցանութիւն, Երաժշտութիւն, Տուրմ եւ Պարեր

Կը մտածէք, որ ուղեղը չի կրնար «հիւանդանալ»: Կը սխալիք:

Ուղեղը կը տառապի համացանցի վրայ ժամերով նստելէն, անընդհատ աշխատանքէն ու ջղաշին վիճակէն:

Ըստ ուղեղի վիրահատութիւններ կատարող մասնագէտ բժիշկներու, ուղեղը կրնայ հիւանդանալ անդադար մեկուսացումէն: Մենք անընդհատ կը նստինք համացանցի դիմաց, երբ ուղեղին պէտք է մաքուր, կենդանի շփում:

Ուղեղի ճիշդ աշխատանքին համար կարեւոր է ամէն առաւօտ կատարել հետեւեալ ծէսը.

Արթննայլէ ետք պէտք է թեթեւ վարժանք կատարել ու անկէ ետք խմել սենեակային ջերմաստիճանի երկու գաւաթ ջուր,

Քունի ժամանակ ուղեղը չի քնանար, ան կ'աշխատի, որ պահպանէ ներքին օրկաններուն աշխուժութիւնը: Ուղեղը նաեւ գիշերը կ'աշխատի չլուծուած խնդիրներու ուղղութեամբ: Այդ իսկ պատճառով ալ կ'ըսեն, որ առաւօտը գիշերուընէ իմաս տուն է:

Յաջորդ հերթը նախաճաշինն է: Անիկա պէտք է ըլլայ առանց

շտապելու: Վայելեցէք կերակուրն ու պահէ: Այդպէս դուք ձեր ամբողջ օրուան պիտի հաղորդէք ճիշդ տրամադրութեամբ:

Ճաշը պէտք է չափաւորուած ըլլայ: Օգտագործեցէք միայն մաքուր ջուր եւ մոռցէք հիւթերու մասին: Յիշեցէք, մեր ուղեղը չի սիրեր ճարպ, ծխախոտ եւ ալքոհոլ, բայց կը սիրէ սեւ տուրմ:

Ուղեղն ու առաւելագոյն աշխուժութեան երկու կէտ՝ 10:00-12:00-ը եւ 16:00-18:00-ը ինկած ժամանակահատուածին: Եթէ անիկա յոգնած է, մենք կրնանք սուրճ խմել եւ ուտել քանի մը կտոր սեւ տուրմ:

Ըստ մասնագէտի՝ ուղեղի լաւագոյն ընկերը ժպտն է: Անոր համար ալ շատ կարեւոր է հեռու վանել տխրութիւնը, միապաղաղութիւնն ու կարենալ ուրախանալ:

Շարժումը նոյնպէս շատ լաւ է ուղեղին համար: Չէ՞ որ, եթէ մենք կը շարժինք, ուրեմն գոյութիւն ունինք: Ի դէպ, եթէ ձեր գլուխը անընդհատ կը ցաւի, ատիկա կրնայ ըլլալ ուղեղի հետ կապուած խնդիրներու պատճառով: Աւելի լաւ է հետազոտուիք բժիշկի մօտ:

Կեանքի Հիմնական Բաներ, Որոնք Պէտք է Դուք Ձեզի Պահէք

Երբեմն լուռութիւնը իսկապէս ոսկի է: Յատկապէս, երբ դուք աներեւակայելի երջանիկ էք եւ կ'ուզէք, որ ամբողջ աշխարհը գիտնայ այդ մասին:

Իմաստուն մարդիկ կ'ըսեն, որ երջանկութենէն բացի, կան քանի մը այլ բաներ եւս, որոնց մասին աւելի լաւ է ոչ ոքի ըսել:

Որո՞նք են անոնք:

- Կարեւոր ծրագրեր: Ասոնք այն փոքրիկ ամէնօրեայ իրա դարձութիւնները չեն, որոնք սովորաբար կը նախատեսէք: Ասոնք աւելի հիմնարար մտադրութիւններն են: Յանկալի չէ անոնց մասին տարածուիլ ձախ ու աջ, մինչեւ կեանքի կոչուի: Ինչո՞ւ:

Եթէ դուք ձեր մէջ կը պահպանէք կարեւոր ծրագրերը, դուք զանոնք կը պաշտպանէք նախանձելի մարդոցմէ եւ թերահաւատութեան բացասական վերաբերմունքէն, անոնցմէ, որոնք առանձնապէս չեն հաւատարմութիւն:

- Բարեգործութիւն: Եթէ դուք կ'օգնէք ուրիշներուն եւ կ'աջակցիք անոնց, որոնց ատիկա պէտք է, հիանալի անձնաւորութիւն էք: Բայց պէտք է բոլորին բարձրաձայնել ձեր բարի գործերուն մասին: Ի վերջոյ, դուք բարի գործեր չէք կա տարեր ձեր անձը գոհացնելու եւ պարծենալու հա մար: Այդ պարագային ատի կա բարեգործութիւն չէ, այլ՝ սովորական կեց ուածք:

- Սակաւապետութիւն: Այն մասին, թէ ինչպէս կ'ապրիք, նոյնպէս մի շեփորէք: Դուք կը վարէք համեստ ապրելակերպ: Ատիկա ձեր անձնական ընտրութիւնն է, բայց գլխաւորը՝ յուզական առումով չափաւորութիւնն է: Եւ եթէ դուք ձեզ կը սահմանափակէք սնունդէ, քունէ կամ հաճոյքներէ, ուստի, հաւանաբար, ատոր համար ունիք աւելի կարեւոր պատճառներ, քան ուրիշներու խղճահարութիւնը կամ հա-

մակրանքը: Եթէ ոչ, ուրեմն, ամենայն հաւանականութեամբ, պէտք է երթալ հոգեբանի մօտ:

- Հերոսական արարքներ: Հաւատացէք, ձեր քաջութիւնն ու հերոսութիւնը անպայմանօրէն պիտի անդրադառնան ձեր եսին վրայ, եւ հարկ չկայ բոլորին անընդմէջ պատմելու ձեր արարքներուն մասին, թէեւ՝ անոնք հիացմունքի արժանի են:

- Հոգեւոր յայտնագործութիւններ: Եթէ ձեր հոգեւոր զարգացման գործին մէջ զգալի քայլ կատարած էք, մի կիսուիք ուրիշներու հետ: Թող ձեր իմաստութիւնը մնայ ձեր մէջ. անիկա, անտարկոյս, պիտի անդրադառնայ ձեր կեանքի ուղիին վրայ, նոյնիսկ ապրելով միայն ձեր սրտին ու հոգիին մէջ:

- Ներընտանեկան խնդիրներ: Ուրիշներու հետ մի քննարկէք ձեր ամուսինի եւ զաւակներու թերութիւնները եւ բնաւորութեան գիծերը: Նման խօսակցութիւնները անծանօթ մարդոց հետ անձամբ ձեզի թեթեւութիւն չեն տար եւ չեն շտկեր իրավիճակը:

Հետեւաբար, մտերիմ մարդոց նկատմամբ ձեր յոյզերը պահեցէք ձեր մէջ կամ անձամբ քննարկեցէք իրենց հետ:

- Բամբասանք: Մի՛ իջնէք այդ մակարդակին, եղէք արժանաւոր մարդ: Նոյնիսկ եթէ ձեր մէջ կուտակուած է բացասական վերաբերմունք անոնց նկատմամբ, որոնց հետ պարբերաբար կը հանդիպիք, ուստի այլ մարդոց հետ այդ մասին քննարկումները դժուար թէ թեթեւցեն ձեր հոգին: Լրացուցէք զայն աւելի արժանի բաներով. թոյլ մի տաք, որ միջավայրը ձեզի վատթարացնէ: Կա՛մ փոխեցէք միջավայրը:

Մտածեցէք, թէ ինչի մասին կը խօսիք սովորաբար: Հաւանաբար երբեմն աւելի լաւ է լուռ:

Վատագոյն Դրդապատճառներ, Որոնք Կինը Ամուսնութեան Կը Մղեն

1) Տղամարդ պէտք է- Կիներ կան որոնք այնքան կը վախնան միակ մնալէ, որ կը շտապեն ամուսնանալ առանց ասպարէզի մասին մտածելու: Հակառակ անոր, որ այդ պահուն պէտք է հասկնալ, որ միայն միակ չմնալու համար ամուսնանալը սխալ է, որ կրնայ փճացնել ամբողջ յետագայ կեանքը: Ինչո՞ւ, օրինակ, չչարտանակել վայելել ազատութիւնը, քանի դեռ ձեր կեանքին մէջ չէ յայտնուած իսկապէս արժանի ու սիրուած անձնաւորութիւն:

2) Ժամանակն է- Շատ կանայք իրենց ամուսնութեան համար կը սահմանեն որոշակի վերջնաժամկէտեր: Ի դէպ, կանայք նոյնքան շատ կը վախնան պարտաւորութիւններէն, որքան՝ տղամարդիկ, սակայն իրենց իսկ յօրինած սկզբունքներն ու վերջնաժամկէտերը կանանց վրայ կը ձգեն հոգեբանական ուժեղ ազդեցութիւն: Անկախ անկէ՝ կը գիտակցին անոնք ատիկա, թէ՛ ոչ:

3) Զաւակ կ'ուզեմ ունենալ- Կենսաբանական ժամացոյցը շատ կանանց կը դրդէ ամուսնութեան: Ատիկա այնքան լուրջ դրդապատճառ է, որ սպասել ամուսինները յաճախ կ'ընտան ոչ թէ սիրելով, այլ ըստ անոր առողջական կամ ֆիզիքական տուեալներու՝ առողջ

ու գեղեցիկ սերունդ ապահովելու համար: Եւ ի՞նչ, չէք կարծե՞ր, թէ ասիկա անհեթեթութիւն է:

4) Ընտանեկան արժէքներ- Դասական դրդապատճառ՝ «ամուսնանալու ժամանակն է» ձեւակերպումով, որմէ ետք կը սկսին ծնողներու երկարուծիք խրատներ, որ իրենց ընկերներուն բոլոր դուստրերը արդէն շատոնց ամուսնացած են: Բնականաբար, անոնց ընտանեկան կեանքի երջանկութեան մասին, իրերու կանոն, ծնողները չեն չիշատա կեր:

Երբեք պէտք է զիջիլ ծնողներուն նման կարեւոր հարցով: Ատիկա պէտք է ըլլայ ձեր անձնական ընտրութիւնը:

5) Դրամի համար- Որոշ կանանց համար ամուսնութեան դրդապատճառ կը հանդիսանայ զուգընկերով հարստութիւնը: Նման վերաբերմունքը յատկապէս ուժեղ կը դրսեւորուի, եթէ կինը ունի նիւթական խնդիրներ ու կաշացած չէ մասնագիտական ասպարէզի մէջ, կամ ալ սովոր է գտնուելու ծնողներու խնամակալութեան ներքոյ: Նման ամուսնութիւնները կը գոյատեւեն այնքան ատեն, որքան տղամարդը դրամ ունի, հակառակ պարագային՝ կինը իրեն համար ուրիշ ապահովուած տղամարդ մը կը գտնէ:

Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան

Շարունակուած էջ 8-էն

ցուց Սրբազան Հօր գրական վաստակին մէջ աղօթքներու գիրքերը, որ թիւով 10 հատ են, որոնք բազմիցս քանի անգամ տպագրութեան արժանացած են:

Սրբազան Հօր աղօթքներու հատորներուն մէջ կը տեսնենք եւ կը սորվինք գոհութիւն եւ փառք տալ Աստուծոյ մեծ պարգեւած կեանքին համար, պատիկներուն կը սորվեցնէք երախտապարտ ըլլալ Աստուծոյ եւ իրենց ծնողքին:

Հինգ գեկուցողները բազմաթիւ մէջբերումներով, պատանուներու վրայ կը ներկայացնեն հատորներէն էջեր եւ բաժիններ, որոնք խորապէս հաղորդակից դարձուցին ներկաները իրենց տրուած նիւթին հետ:

Յայտագրին ընթացքին երկու անգամ ելոյթ ունեցաւ Չուլթակի, սրինգի եւ դաշնակի վրայ նուագեցին արտակարգօրէն տաղանդաւոր Պետրոսեան ընտանիքի գաւակները՝ իրենց մօր ընկերակցութեամբ, արժանանալով ներկաներուն երկարատեւ ու ջերմ ծափահարութեան:

ՆՍՕՏՏ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Գարեգին Բ. Կաթողիկոսի բառերով Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեանի մասին ըսած է, թէ Յովնան Սրբազանը. «Մեր եկեղեց-

ւոյ պարծանքն ու հպարտութիւնն է», մենք ալ այդ երեկոյ ծանօթացանք մեր Սրբազանին գրական անգնահատելի տաղանդին ու մանաւանդ անոր աշխատասիրութեան անսպառ եռանդին:

Ձեռնարկի վերջաւորութեան Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեան խորապէս յուզուած՝ իր փակման եւ շնորհակալութեան խօսքը ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին, բանախօսներուն, Պետրոսեան ընտանիքի արուեստագէտ անդամներուն եւ ներկայ ժողովուրդին

Այդ օր գուգադիպելով մէկ օր առաջ 1 Գեկտեմբերին, Սրբազան Հօր տարեդարձին օրուան հետ, կազմակերպիչ յանձնախումբը գեղեցիկ գաղափարը ունեցաւ տարեդարձի կարկանդակ մը բերել եւ բոլոր ներկաները միասին լիաթոք եւ միաբերան երգեցին տարեդարձի երգը: Իսկ Տիկնանց յանձնախումբը պատրաստած էր շատ ճոխ հիւրասիրութիւն մը:

Ձերմօրէն կը շնորհաւորենք կազմակերպիչ յանձնախումբը այս խիստ շահեկան ձեռնարկին համար, անհամբեր սպասելով անոնց յաջորդ ձեռնարկին, իսկ մեր Սրբազան Հօր կը մաղթենք երկար եւ կենսառոջ կեանք մը, Աստուծահաճոյ նորանոր ծառայութիւններով լեցուն օրեր:

«Սուներով Պար» Ֆիլմը Կը Ցուցադրուի

Շարունակուած էջ 13-էն

քանի որ իր խորթ հայրը հայ եղած է ու իրենց տան մէջ միշտ հնչած է խաչատրեանի երաժշտութիւնը, եւ իրեն համար մեծ պատիւ է, որ իրեն բախտ վիճակուած է խաղարկային ֆիլմ նկարահանել 20-րդ դարու լաւագոյն երգահաններէն մէկուն մասին:

39-ամեայ Արամ խաչատրեանի կերպարը մարմնաւորած է Համբարձում Քաբանեանը:

Ֆիլմի նկարահանումները տեղի ունեցած են Ռուսաստանի եւ Հայաստանի մէջ՝ Երեւանի Ալեք-

սանտր Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէսթի թատրոնին մէջ՝ թաւշեայ յեղափոխութեան վերջին հինգ օրերուն:

Եռսուպ Ռազիկովը պատմած էր, որ դուրսը մարդիկ յեղափոխութիւն կ'ընէին, իսկ իրենք ներսը ֆիլմ կը նկարահանէին եւ ճիշդ այն օրը, երբ յեղափոխութիւնը յաղթեց, աւարտած են ֆիլմի նկարահանումները: «Իսկ փողոցները հազարաւոր մարդիկ կը պարէին ու կը թռչկոտէին, ամբողջ քաղաքը կարծես ուրախութենէն խենթացած ըլլար, մենք ամէն ինչ նկարած ենք», - պատմած է բեմադրիչը:

Թուրք Լրագրողը Եթերի Ժամանակ Խօսած Է

Շարունակուած էջ 6-էն

աւելցուցած է, որ երբեմն մոռանալը ցանկալի ալ է, քանի որ որոշ բաներ իսկապէս չիշեւ պէտք է:

«Քիչ մը պիտի ընդլայնենք մեր մտահորիզոնը: Գերմանիոյ վարչապետ Մերքելը Լեհաստանի մէջ այցելած էր Օսվեցիմի համակերտնացման ճամբարի յուշահամալիր: Ան այնտեղ շատ կարեւոր բան մը ըսաւ, բառացիօրէն հետեւեալը «Այս վայրը գերմանացիները ղեկավարած են, եւ մենք պէտք չէ մոռնանք առերեսուել այս պատմութեան հետ, պիտի չիշեցնենք», - նկատել տուած է Սարաչը եւ շարունակած. «Իսկ մենք միշտ կը խուսափին այս թեմայէն, կ'ըսենք «Աման, այդ հարցերուն մի խառն-

ուիք»: Բայց քանի դեռ չեն յիշեր, երեսով չեն տար այս հարցերը, չի բարձրանար գիտակցութեան մակարդակ»:

Թուրք լրագրողը նաեւ ուշադրութիւն հրաւիրած է յատկապէս այն հանգամանքի վրայ, որ Մերքելը նման յայտարարութիւն ըրած է՝ ըլլալով բաւական պահպանողական քրիստոնեայ զեմոկրատական կուսակցութեան առաջնորդ: Խօսելով սեփական անցեալի հետ առերեսուելու անհրաժեշտութեան մասին՝ Սարաչը նաեւ յիշեցուցած է Գերմանիոյ նախկին վարչապետ Ուիլի Պրանտի մասին, որ 1970-ի Գեկտեմբեր 7-ին վարչապալի մէջ ծնկաչոք ներողութիւն խնդրած էր հրեաներէն՝ նացիստական Գերմանիոյ կատարած հոլոքոսթի համար:

Վերջ՝ Քանդիչ Ատելութեան

Շարունակուած էջ 6-էն

դիկ բաժնեկցին աշխարհը (Imagine all the people sharing all the world)»:

Այդ երեւակայութեամբ մղուած մարդիկ հալածուեցան, երեւակայողներ (dreamers) կոչուեցան

եւ ատելութիւն սերմանող իշխանութիւններու կողմէ մերժուեցան:

Նոր տարուան առթիւ եղած բոլոր ազնիւ բարեմաղթութիւնները առողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան այլ բան չեն, եթէ ոչ մարդոց երեւակայութեան

«Ձուարթնոց» Պարախուները Ձուարթ Ելոյթով

Շարունակուած էջ 8-էն

«Ձուարթնոց» պարային համոյթի ղեկավարներ վարդան եւ Արմինէ Աղաջանեանները հիանալի, բացառիկ, սովորականից տարբեր մտալոյսամբ լեփ-լեցուն հանդիսասրահի հանդիսատեսին պարային համոյթի կատարողական ոճի բոլորովին մի նոր տարբերակ ցուցադրեցին:

Իրականում՝ սա սոսկ համերգ չէր սովորական ըմբռնմամբ: Սա՝ պարի լեզուով մեր ժողովրդի, Հայաստան աշխարհի հազարաւոր տարիների պատմութիւնն էր՝ պատուաւի վրայ ցուցադրուող պատկերներով, նիւթին՝ միանգամայն համահունչ հիանալի տեքստով, երաժշտութեամբ եւ շէնշող պարերի համաձուլուածքով:

«Ձուարթնոց» պարային համոյթի մեր ջահելները «պատմութեան քառուղիներով» մեզ տեղափոխեցին Հայ ժողովրդի պատմութեան խորքերը ու բերին ետ՝ դէպի այսօրը: Եւ այդ պատմութեան մէջ կար խինդ, ուրախութիւն, ինչպէս եւ վիշտ, պայքար, ամպամած եկնքում ճախրող, մութից դէպի լոյսը ձգտող, ազատութիւն փնտրող ճերմակ աղանին:

Կար նաեւ եղեռն, կոտորած, հերոսացած Արցախ, Հայ ազգի մեծաթիւ Մեծեր, որոնցից մեծամեծ Կոմիտասն իր «Հով արէք»ով յոյս էր տալիս հայ շինականին չվհատուել, որովհետեւ նրա դարդին դարման կ'անի մեր երկնաքեր սարերից փչող զով քամին. պառկիր սարի լանջին՝ հայեացքդ դէպի վեր, դէպի երկինք եւ տես թէ ինչպէս է երկինքը պարզուում: Քիչ անց քեզ կը մօտենայ Մաշտոցը Մեսրոպ ու դէմ կ'անի Այբբենարանը ու կ'ասի՝ Կարդա՛, կարդա՛ քո ազգի պատմութիւնը, յետոյ դէմքդ շրջի՛ր ու նայի՛ր Խաչքարերին, որոնց տակ քո նախապապերն են թաղուած, ու աշխատի՛ր այնպէս ապրել, որ արժանանաս Խաչքարի տակ հանգչելու պատուին..., որովհետեւ Խաչքարերը յաւերժութեան կոթողներ են եւ միայն մենք է որ մեր հին պատմութիւնը օտարներին ենք պատմում այդ հրաշք-կոթողներով...:

«Ձուարթնոց» պարային համոյթի 30 տարուայ դժուարին աշխատանքով ձեռք բերուած այս յաջող ելոյթը վկայութիւնն է այն իրողութեան, որ պարախմբի իւրաքանչիւր անդամ ապրում, շնչում է հայկական պարով: Խմբում կան անդամներ, որոնք պարում են համոյթի ստեղծման օրից, եւ որոնք չեն պատկերացնում իրենց կեանքը առանց համոյթի ղեկավարներ ընկեր վարդանի եւ Տիկին Արմինէի:

Մեծապէս տպաւորուած են շնորհառատ լրագրող, երիցս բանիմաց Լեւոն Գալըստեանի գրական տեքստով: Նա բոլորին յայտնի Հայաստանի հեռուստատեսութեան «Երգ երգոց» հաղորդաշարի գրական նիւթի մշտական հեղինակն է: Ի բախտաւորութիւն ինձ, «Երգ երգոց» ինձ նուիրուած հաղորդման գրական մասն էլ է նա գրել:

Պէտք է շնորհակալ լինել «Ձուարթնոց» պարային համոյթի ազգային տարազների հեղինակ Տիկին Քնարիկ Պալեանին, որին յաջողուել է հայկական գոյներին համապատասխան նրբերանգներով ճոխ ու գրաւիչ դարձնել թէ աղջիկների եւ թէ տղայոց հագուստները:

Ինչպէս միշտ իր բարձր դիրքում էր երաժիշտ, յօրինող, մշակող ու գործիքաւորող Անդրանիկ Մուրադեանը: Տարբեր երաժշտական գործերի միանգամայն տրամաբանական փոխակերպումներն ու հարմոնիկ հարազատ հնչողութիւնը ականջ էր շոյում: Մուրադեանը իր գործի վարպետն է:

Վարդան եւ Արմինէ Աղաջանեանների ղեկավարած «Ձուարթնոց» պարային համոյթի 30-ամեայ յոբելեանական երեկոյի արժանի յաջողութեանը մեծապէս նպաստեց նաեւ բեմի շքեղ լուսային փոխակերպումներն ու պատուաւի վրայ ցուցադրուող բեմադրութիւնը:

Երեկոն իսկապէս աւարտին հրավառութեան էր նման: Ապրէք Ձուարթնոցականներ: Մշտապէս եղէք հաւատարիմ Ձեր անուանը. Ձուարթ պահէք ձեզ, շէն, ուրախ կեանքով ապրէք, իսկ աղջիկներն էլ թող լինեն Ձուարթու, այսինքն՝ հրեշտակներ:

արտայայտութիւնը ապագայի մը նկատմամբ, որ կրնայ յաջողիլ եղբայրակցութեան մթնոլորտի մէջ եւ ձախողիլ՝ ատելութեան մթնոլորտի մէջ: Ուրեմն ցանկանք, որ

նոր տարին վերջ դնէ քանդիչ ատելութեան, որպէսզի եղբայրակցութեան մթնոլորտի մէջ բոլորս ըլլանք առողջ, յաջողակ եւ երջանիկ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel :----- Email: -----

Ջարմանալի Նմանութիւններ

Շարունակուած էջ 14-էն

շարունակեն աշխարհով մէկ ցրուած պատճառները, որոնք գրեթէ զիրար կը ճանչնան:

Աշխարհի 21 երկիրներու մէջ կան 161 պատճառներ, որոնք կոչուած են պատճառ սփիւռքի մէջ պատճառ մշակութիւն պահպանելու: Այս ակումբներէն 106-ը կը գտնուին Լատինական Ամերիկա, 36-ը՝ Հիւսիսային Ամերիկա, 10-ը՝ Սպանիա, 5-ը՝ Եւրոպական այլ երկիրներու մէջ եւ 3-ը՝ Աւստրալիա: Վերջին տարիներուն սփիւռքէն ներգաղթի ալիք մը նկատուած է դէպի պատճառներ հայրենիք, պատճառ սովորաբար կառչած են իրենց արմատներուն եւ լեզուն, մշակութիւնը, ազգագրական սովորոյթները, երգերը, պարերը պահպանելուն:

Անոնք բազմաթիւ առասպելներ, առակներ ու գուարճապատումներ, ժողովրդական զրոյցներ ունին: Կարգ մը աւանդազրոյցներ 1996 թուականին հայերէնի թարգմանած է Վահան Սարգսեան, առոնք լոյս տեսած են առանձին գիրքով: Հայ-պատճառ առնչութիւններուն եւ պատճառ ժողովուրդի մասին վաւերակագրական շարժանկար մը նկարահանած է բեմադրիչ Արտակ Աւտալեան:

Վահան Սարգսեան, իր կատարած աշխատանքներուն հետեւանքին մասին գրած է հետեւեալը.

1. Կազմուած է պատճառներն ու հայերէնի ընդհանրութիւններու աւելի ամբողջական ցուցակ մը. բառերուն թիւը կը հասնի հազարի՝ ներառեալ քերականութեան քանի մը ձեւամասնիկներ: Ընդհանրութիւնները այնքան շատ են, որ կարելի է նոյնիսկ կազմել բարդ նախադասութիւններ, որոնք ընդհանուր առմամբ հասկնալի ըլլան թէ՛ պատճառներն եւ թէ՛ հայերուն: Այսքան մեծաթիւ համընկնումները զուգահեռութիւն կարելի է համարել, կը բացառուի անշուշտ փոխառութիւնը, նկատի ունենալով երկու ժողովուրդներուն միջեւ ինկած մեծ հեռաւորութիւնը:

2. Հայկական լեռնաշխարհի եւ Պատմախոյ մէջ մեծ թիւով տեղանուններ կան, որոնք երբեմն կրկնութեան աստիճան մօտիկ են իրարու: Ատենին այդպիսի համընկնումները գիտութեան համար հետաքրքրական չէին, քանի որ ուրիշ շրջաններու մէջ ալ կարող

են իրարու նման տարրեր ըլլալ: Սակայն հայերէնի ու պատճառներ տեղանուններուն ընդհանրութիւնները ունին կարեւոր իւրապատկութիւն մը՝ երկու լեզուներուն մէջ նոյն իմաստը ունին: Օրինակ՝ հայերէն «արան» (հովիտ) - պատճառներէն «արան» (հովիտ), հայերէն «կարբէ» (քարի տակ) - պատճառներէն «կարբէ» (քարի տակ), հայերէն «ծաւալ» - պատճառներէն «սաբալ» (ծաւալ) եւ այլն:

3. Ըստ պատճառ ազգային աւանդոյթին, Հայաստանը կը նկատուի իրենց նախահայրենիքը: Զանազան աղբիւրներ կը վկայեն այն մասին, որ Հայաստանէն եկածները գիտէին մետաղի մշակման գաղտնիքը: Այս տեսանկիւնէն շատ հետաքրքրական է պատճառներին նանուանումը՝ «էռուքալտուն», որ յառաջացած է «էռուքէ» արմատէն: Վերջինս զանազան բարբառներու մէջ զանազան ձեւեր ունի՝ էռուք, ուսք, էսքու, սսք եւ այլն: Այս արմատը ծագումով կապուած է հայերէն «ոսկի» բառին, որ հայկական բարբառներուն մէջ եւս զանազան ձեւեր ունի՝ իսկի, վեսիկ, ասկի, ուսկի եւ այլն: Հայերէն «ոսկի» բառէն յառաջացած է «Ոսկան» անունը, որ բառացիօրէն կը նշանակէ «ոսկի ունեցող» ու նման է պատճառ ազգային անուանումին «պաքոն»՝ լատիներէն աղբիւրներու մէջ «վաքոն»: Հետաքրքրական է, որ Ուրարտուի թագաւորութեան ժամանակ վանայ լիճին հարաւարեւելեան ափը, այսինքն՝ հայ ժողովուրդի բնօրինակը, կը կրէր խուրճիկի անունը, որ բառացիօրէն կը նշանակէ՝ «ոսկիի հովիտ»: Վաղ միջնադարէն հայկական աղբիւրներու մէջ խուրճիկի անունը կը յիշատակուի այլ ձեւով՝ որպէս Հայոց ձոր: Ուրարտական արձանագրութիւններուն մէջ կը յիշատակուին նաեւ Ուրմիոյ լիճի հիւսիս-արեւելեան ափի Ուշկիանի լեռները: Ստրապոնի ժամանակ ասոնք արդէն կը կոչուէին Հայկական լեռներ, յետագային հայկական աղբիւրներու մէջ նշուեցան որպէս Ոսկեան՝ ոսկէ: Այս փաստերէն կարելի է եզրակացնել, որ մեր նախնիներուն համար «ոսկի մշակող» ու «հայ» գաղափարները հոմանիշ եղած են: Այս մէկը կը հաստատուի նաեւ պատճառ ազգային աւանդութիւններով:

Անշուշտ կարելի չէ ըսել, որ հայերուն ու պատճառներուն կապերուն

վերաբերող բոլոր հարցերը վերջնականապէս լուծուած են: Սակայն ամենակարեւորը արդէն պարզ է. պատճառներն քաղաքակրթութեան մէջ առկայ է շատ խոր հայկական շերտ մը, որ յառաջացած է գաղթի հետեւանքով՝ նախապատմական շրջանին: Բոլորը կ'ընդունին, որ պատճառները Եւրոպայի ամենահին ազգն են: Անոնք այստեղ հնդեւրոպացիներէն շատ աւելի առաջ հաստատուած էին եւ առաջին անգամ Եւրոպա ներխուժած՝ Ն.Ք. 1000-ին: Հետեւաբար, այդ ժամանակ, հայկական տարրը արդէն կար Արեւմտեան Եւրոպայի մէջ ու զգալիօրէն կ'ազդէր Եւրոպական քաղաքակրթութեան զարգացման վրայ:

Պատճառներու ժողովրդական գրոյցներուն մէջ կան տարօրինակ առասպելական «պատմութիւններ» կոչուող կերպարներ: Ասոնք կը բնակէին սովորական մարդոցմէ հեռու՝ անտառներուն մէջ: Ուրիշ ազգերու դիցաբանութեան մէջ ալ կան նման կերպարներ, բայց պատճառներու պատմութիւններու իւրապատկութիւնը այն է, որ անոնց ծանօթ էր մետաղի ու հացահատիկի մշակման գաղտնիքը: Պատմութեան որոշ ժամանակահատուածին, հաւանաբար, առասպելական պատկերացումները ձուլուած են պատմական դէպքերուն: Անտառի բարի հսկաներուն կերպարը կրնար հայերուն գալէն առաջ ալ գոյութիւն ունենալ, բայց յետագային Հայաստանէն եկողները, որ ծանօթ էին մետաղի ու հացահատիկի մշակման, սկսան նոյնականացնել պատճառներու հետ: Ասիկա տրամաբանական է, եթէ նկատի առնենք, որ այն ժամանակներուն մետաղ ձուլող ու հացահատիկ անեցող ու հացահատիկ անեցող մարդոց դիւրութեամբ կարող էին նկատուի գերբնական էակները: Այսպէսով, հայերը բացի լեզուէն, Եւրոպա տարած են նաեւ կարեւորագոյն արտադրական ձեւքերութիւններ՝ մետաղի մշակում ու հացահատիկի անեցում: Պատահական չեն, հետեւաբար, գիւղատնտեսութեան վերաբերող պատճառներն ու հայերէնի ընդհանուր բառերը: Հարկ է նշել նաեւ, որ հնագիտական տուեալներուն համաձայն՝ արմենոսիտ ցեղը Փիրենեան թերակղզին մէջ յայտնուած է Ն.Ք. 3-րդ հազարամեակի կէսերուն, իսկ այն, որ պատճառ արմենոսիտ են, տակաւին ոչ ոք հերքած է:

Այս պատմութեան մէջ իրենց հետաքրքրական ու անսպասելի ներդրումն ունեցան նաեւ ծագումնաբանները: Ծանօթ է, որ հայերը ունին ողնուղեղի նուիրատուութեան խնդիր (բժշկական ճանապարհով): Աւելի պարզ՝ հայոց ողնուղեղ կարող է ընդունիլ միայն հայէն: Ատոր համար ալ գիտնականները կը փնտռեն այնպիսի նուիրատու հիւսուածքներ, որոնք կը համապատասխանեն հայկականին: Եւ ահա պարզուեցաւ, որ հայկականին ամենամօտը պատճառ ոսկրահիւսուածքն է:

Պատճառներու ազգային խօսքը կ'ըսէ. «Ինքնաճանաչումը իսկական գիտութիւն է»:

«Ժամանակ»/Պոլիս

ԽՆԱՄԱԿԱԼ Կ'ՈՒՋՈՒԻ

Հիւանդ տիկին մը Փաստինայի մէջ կարիքը ունի խնամակալի մը Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը 24 ժամ: Ծաբաթ եւ Կիրակի օրերը կարիքը չկայ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել 626-797-3222 թիւին:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առնչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Լիւսի Աճէմեանի եւ Սահակ Թութճեանի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հայկուհի Փաթափութեան իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալներու զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

Առ այդ \$100 տոյր կը նուիրեն «Մասիս»ին:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

ՄԱՐԶԱԿԱՆ

«Ռոման» Յաղթեց, Մխիթարեանը Փոխարինման Դուրս Եկավ Ու Դարձավ Կոլի Չեղինակ



Իտալիայի առաջնութեան 16-րդ տուրում «Ռոման» ընդունեց յետնապահ ՍՊԱԼ-ին: Պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխավորած թիմը կամային յաղթանակ տարաւ 3:1 հաշուով:

Առաջինը յաջողութեան հասան հիւրերը, որոնք առաջին խաղակէսի վերջնամասում ստացան 11 մեթրանոցի իրաւունք եւ արդիւնաւէտ իրացրին:

«Ռոման» երեք կոլերն էլ խփեց երկրորդ խաղակէսում: Աչքի ընկան իտալացի կիսապաշտպան Լորենցո Պելլեգրինին, արժենթինացի յարձակուող Դիեգո Պերոտին:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» պահեստայիններէ թւում էր եւ 79-րդ րոպէին փոխարինեց Պերոտին: 4 րոպէ անց նա խփեց «Ռոմայի» երրորդ կոլը:

«Ռոման» 32 միւտրով բարձրացաւ չորրորդ տեղ, ՍՊԱԼ-ը վերջինն է՝ 9 միւտրով:

«Յուլվենտուսի» Յաղթանակն Ու Ռոնալդուի Դուրը

Իտալիայի առաջնութեան 16-րդ տուրում ախոյեան Թուրինի «Յուլվենտուսը» սեփական խաղադաշտում մրցեց «Ուդինեզեի» հետ: Մաուրիցիո Սարիի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 3:1 հաշուով:



Դուրի հեղինակ դարձաւ պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն: Թուրինեան թիմի կազմում աչքի ընկաւ նաեւ իտալացի պաշտպան Լեոնարդո Բոնուչին:

«Յուլվենտուսը» 39 միւտրով բարձրացաւ առաջին տեղ: Մէկ հանդիսարանում քիչ անցկացրած «Ինտերը» հետ է 1 միւտրով: «Ուդինեզեն» 17-րդն է՝ 15 միւտրով:

«Մանչեսթեր Սիթին» Խոշոր Հաշուով Յաղթեց «Արսենալին»

Անգլիայի առաջնութեան 17-րդ տուրում ախոյեան «Մանչեսթեր Սիթին» Լոնտոնում հիւրընկալուեց «Արսենալին»: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 3:0 հաշուով:

Դուրի հեղինակ դարձաւ պելճիքացի կիսապաշտպան Կեւին Դե Բրուչեն: Կոլ խփեց նաեւ անգլիացի յարձակուող Ռահիմ Ստերլինգը:

«Մանչեսթեր Սիթին» 35 միւտրով երրորդ տեղում է եւ 4 միւտրով հետ է երկրորդ տեղում ընթացող «Լեսթեր Սիթիին»: Առաջատար «Լիւքսըմբուրգը» ունի 49 միւտրով: «Արսենալը» 9-րդ տեղում է՝ 22 միւտրով:

«Լիվերպուլը» Յաղթեց Սալահի Դուրի Շնորհիւ

Անգլիայի առաջնութեան 17-րդ տուրում առաջատար «Լիվերպուլը» տանը մրցեց յետնապահ «Ուոլթֆորդի» հետ: Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 2:0 հաշուով:

Դուրի հեղինակ դարձաւ «Լիվերպուլի» եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը: 38-րդ րոպէին նա օգտագործեց սենեգալցի յարձակուող Սադիո Մանէի կողային փոխանցումը: Մանեն յետագայում (51-րդ րոպէին) եւս գրաւեց մրցակցի դարպասը, սակայն VAR-ը ցոյց տուեց խաղից դուրս վիճակ:

90-րդ րոպէին Սալահն աչքի ընկաւ պելճիքացի յարձակուող Դիվոկ Օրիգիի արդիւնաւէտ փոխանցումից յետոյ: Օրիգին դրանից 2 րոպէ առաջ փոխարինել էր պրագիլացի Ռոբերտո Ֆրիմինոյին:

«Լիվերպուլը» 16 յաղթանակից եւ 1 ոչ ոքից յետոյ 49 միւտրով

Նարեկ Աբգարեանի 14-րդ Անընդեջ Յաղթանակը



Պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Նարեկ Աբգարեանը 14-րդ անընդ-մէջ յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ուինգում:

Մոսկուայում տեղի ունեցած պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի ընթացքում հայ բռնցքամարտիկը 8 ռաունդանոց մենամարտում մրցա-վարներէ միաձայն որոշմամբ յաղթել է 31-ամեայ կոլումբիացի Անուար Սալասին: Գրանցուել է 80:72, 80:72, 80:72 հաշիւը:

Յիշեցնենք, որ Նարեկ Աբգարեանին է պատկանում WBC վարկածով թեթեւագոյն քաշային կարգի International Silver ախոյեանական գոտին: Պրոֆեսիոնալ ուինգում նա անցկացրել է 14 մենամարտ եւ տարել նոյնքան յաղթանակ:

Աբգարեանը նախորդ մենամարտն անցկացրել էր Նոյեմբերի 21-ին ԱՄՆ-ի Լոս Անճելոս քաղաքում, որտեղ ժամանակից շուտ յաղթել էր մեքսիկացի Խուան Կանտուին:

Մրապեն՝ Աշխարհի Ամենաթանկարժէք Ֆուտբոլիստ

«Պարի Սեն Ժերմենի» յարձակուող Կիլիան Մբապէն Football Benchmark ֆուտպոլային պիզնեսի վերլուծական ընկերութեան KPMG պատ-ֆորմի վարկածով ճանաչուել է ամենաթանկարժէք ֆուտպոլիստ:



Յուցակում ամենաթանկարժէք թոփ-10 ֆուտպոլիստներն են, ինչպէս նաեւ եւս հինգ ֆուտպոլիստ, ում տրանսֆերային արժեքը գերազանցում է 100 միլիոն եւրոն:

«Ոսկէ գնդակի» հնգակի դափնեկիր Կրիշտիանու Ռոնալդուն չկայ ցանկում:

1. Կիլիան Մբապէ («Պարի Սեն Ժերմեն») 225 միլիոն եւրո
2. Նեյմար («Պարի Սեն Ժերմեն») 185
3. Լիոնել Մեսսի («Բարսելոնա») 180
4. Էդեն Ազար («Ռեալ Մադրիդ») 152
5. Ռահիմ Ստերլինգ («Մանչեսթեր Սիթի») 150
6. Մոհամեդ Սալահ («Լիվերպուլ») 150
7. Հարի Բեյն («Տոտենհեմ») 140
8. Սադիո Մանէ («Լիվերպուլ») 130
9. Կեւին դէ Բրուչեն («Մանչեսթեր Սիթի») 130
10. Անտուան Գրիգման («Բարսելոնա») 125

Եւս հինգ ֆուտպոլիստի անուն, որոնց տրանսֆերային արժեքը գերազանցում է 100 միլիոնը Զեյդոն Սանչո (116), Պոլ Պոզա (115), Վիրջիլ վան Դայկ (114), Ֆրենկի դէ Յոնգ (106), Մարկուս Ռեշֆորդ (100):

«Բարսելոնան» Կարելոր Միաւորներ Կորցրեց «Էլ Կլասիկոյից» Առաջ

Սպանական Պրիմերայի 16-րդ տուրում «Բարսելոնան» հիւրընկալուելիս մրցեց «Ռեալ Սոսիեդադի» հետ: Խաղն աւարտուեց ոչ-ոքի՝ 2-2 հաշուով:

Հանդիպման հաշիւը «Սոսիեդադի» կազմում 12-րդ րոպէին 11-մեթրանոցից բացեց Միկել Օեարզաբալը: 38-րդ րոպէին Անտուան Գրիգմանը Լուիս Սուարեսի փոխանցումից գրաւեց մրցակցի դարպասն ու խաղի մէջ վերադարձրեց «Բարսելոնային»: Կատալոնական ախուսը 2-րդ խաղակէսի մեկնարկում առաջ անցաւ հաշուի մէջ. 49-րդ րոպէին Մեսսիի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ Սուարեսը: 62-րդ րոպէին Ալեքսանդր Այգեկը կրկին վերականգնեց հաշուի հաւասարութիւնը: Այլ կոլեր չարձանագրուեցին:

Այս ոչ-ոքիից յետոյ «Բարսելոնան» 35 միւտրով Լա Լիգայի մրցաշարային աղիւսակի առաջին հորիզոնականում է եւ ընդամէնը 1 միւտրով է գերազանցում «Ռեալին», որն այս տուրի իր հանդիպումը դեռ չի անցկացրել:

Գլխավորում է մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղում ընթացող «Լեսթեր Սիթին» 16 խաղում վաստակել է 38 միւտրով: «Ուոլթֆորդը» վերջին տեղում է՝ 9 միւտրով: